



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. Մ. ՎՐՈՅՔ

# ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

ՄԻ ՀԱՄԱԼՈՇ ՀԱՅԵԱՑՔ

ՆՈՐԱ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐծՈՒԽԵՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

(Արտասուրամ «ՄՈՒՐՃ» ամսագրից)

ԹԻՅԼԻՈ

ՏՊՈՒՐԻԿ Ա. Գ. ԱԾՏԵՎԵԱՅՑ

1891

5  
24.413

Ա. Ա. ՎՐՈՅՔ

ԳԵՐԵՐ

# ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

(ՄԻ ՀԱՄՍՈՒՈՑ ՀԱՅԵԱՑՔԻ ՆՈՐԱ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒ-  
ՆԵՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ)

(Արտատուած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

Թ. Ի Ֆ Լ Ի Ս  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ  
1891

Дозв. цензур. Тифлисъ, 4 Сентября 1891 г.  
Типогр. М. Д. Ротинянца, на Гол. пр. д. № 41.



971-2005-



† ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

## ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

(Մի համառօտ հայեացը նորա կեանքի և գործոնէութեան վերայ)

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա.

Աղամեանի բնաւորութեան զլիսաւոր դժերը.—Նորա կեանքը ծանօթների և բարեկամների շրջանում,—իւր ընկերների հետ.—Մի քանի խօսք մինչև աչժմ տպւած նորա կենսագրութիւնների մասին,

Բ.

Պ. Աղամեան կ. Պօլսում.—Նոր. Նախիջևանում.—Կովկասում և նորա ունեցած ներգործութիւնը Աղամեանի խաղի նկատմամբ.—Աղամեան Ռուսաստանում.—Վերջին այցելութիւն ՚ի Պօլիս և Զմիւռնիա.—Հիւանդութիւն և մերջին օրեր:

Գ.

Պ. Աղամեանի հայեացքը դերասանական արեւոտի մասին.—Իւր զլիսաւոր դերերը.—Ի՞նչ արեց Աղամեան հայ բեմի համար.—Աղամեան իր բանաստեղծ և նկարիչը.—Ի՞նչ էր սիրում Աղամեան.—Մեր մատնաւոր կարծիքը նորա մասին ընդհանրապէս:

Չենք առնելով զրիչ, մենք կատարելապէս զգում ենք զրւելու նիւթի լրջութիւնը և թատրօնական ապագաէ սարեզրի համար սորա ունենալիք նշանակութիւնը: Մենք կրկնում ենք, կատարելապէս կշամ ենք այն պատասխանառութեան ծանրութիւնը, որ սորամով առնում ենք մեր վերաէ ներկալի և ապագալի առաջ, և այդ պատճառով վերին աստիճանի դրու ենք վարելու մեր լատնելիք կարծիքներում: Մենք չէինք համարձակիլ կարծիքներ ավտնել, եթէ խորապէս համոզւած չը լինէինք մեր ասելիքներին, և չը սխալւելու համար մեր զգուշութեան դլխաւոր պատճառը այն է, որ Պետրոս Աղամեանին մենք նասում ենք այն մեծ հանճարների կարգին՝ որ զարերը հազիւ կը ծնանեն:

Ա.

Աղամեանի բնաւորութեան դլխաւոր զծերը:—Նորա կեանքը ծանօթների և բարեկամների շըջանում:—Եւր ընկերների հետ:—Մի քանի խօսք մինչև այժմ տպւած նորա կենացքութիւնների մասին:

Աղամեանի բնաւորութեան գլխաւոր զծերը:—Ընթերցազրութիւն կարող է բոլորովին վաստահ լինել, որ մենք զանազան զրաւոր կամ բերանացի ցուցմունքների չնքք զիմում Աղամեանի բնաւորութեան դլխաւոր զծերը նկարագրելիս, այլ զրի ենք առնում այն բոլորը, որ նկատած ենք նորա մեջ, մեր հնգամեակ բարեկամութեան և ընկերութեան միջոցին: Մենք առանց նախապաշարման հետեւ ենք նորա բնաւորութեան զանազան երեսներին, նորան ուսումնասիրելու համար, որովհետեւ առանց ուսումնասիրելու նորա բնաւորութիւնը ոչ թէ նորա հետ մշտական ընկերակցութիւն այլ նոր իսկ բա-

րեկամութիւն դժւար էր անել: Այս ասում ենք նորա համար, որովհետեւ նա այնքան տարօրինակ բնաւորութեան տէր մարդ էր, որքան և արտաքոչ կարգի տաղանդաւոր զերասան: Կատաղի բարկութեան հետ զառան հեղութիւնը, աէդ հապարտութեան հետ վերին աստիճանի խոնարհութիւնը, անհաշիւ չուպլութեան հետ կոպէկի հաշիւները, օձի խորամանկութեան հետ աղաւնոյ միամսութիւնը, որոնց շատ երկար կարելի է թւել այս բոլոր բնաւորական հակամառութիւնները միացած էին նորանում: Նա փոփոխամիտ էր անչափ՝ որչափ և համատամիտ: Շատ բանի կարելի էր տեսնել, որ ախօրւակ սիրածը էզուց ասում է, ալսօրւակ համակրածին էզուց հակակրում, բայց կը լինէին և դէպքեր, որ հակառակ իւր վերաէ եղած ուղղակի կամ անուղղակի ազգեցութիւնների, նորան չէր կարելի ոչ մի կերպով չեզել իւր համոզմունքից կամ մոպղրութիւնից: Շատ անզամ պատահում էին դէպքեր որ նա հաւատացածին հաւատում էր անպայման, իսկ չը վստահածին չէր հաւատում, թէի շատ փաստեր և ապացուցներ լինէին իւր առաջ վստահելու կամ հաւատալու: Բայց նա սիրում էր առհասարակ իւր մօտիկ շըջապատղներին հուսատաւ, նա սիրում էր մարդկակին բնաւորութեան ոչ թէ խորի այլ բացարձակապէս լաւ կողմերը տեսնել, և նորա այս բնաւորութիւնն էր պատճառ որ նա շատ բաճախ զործիք էր զառնում իւր շըջապատղների ձեռքին, որոնք ի չարն էին զործագրում նորա բարեմտութիւնը: Նա չէր սիրում երբեք տանց ընկերոջ կամ բարեկամի մնալ, նա կը սիրեր ընկեր տնենալ շըջապատցութեան, սեղանի և մանապարհորդութեան ժամանակ: այս զգացումը նորանում այն աստիճան զար գացած էր որ ճանապարհորդութեան ժամանակ երբ իրան դուրեկան մէկին պատահէր նա երկար կը թափանձէր որ

առժամանակ թողնէ իւր պարապմունքը և աննպատակ ձանապարհորդէ իրան հետ, որ բնականաբար ոչ ոք չանձն չէր առնէր։ Այդ բնութիւնից տաղանդով և ձիրքերով օժտւած արևստագէտը իւր պահանջներով շատ անգամ կը դառնար իրրե մի փաքրիկ մանուկ՝ որ կը պահանջէ դոզի մէջ ցոլացող լուսինը, որին այդ անկարելի պահան ջից չետ կանգնեցնելու համար պէտք է անպատճառ շունչ կամ խարիւլ։

Իւր վառ երեակազութեան պատճառաւ շատ աննշան զէպքեր կը միծանափին, կը կազմաւորիէին և իրան երկար մտատանջութիւնների և հոգեկան տանջանքների պատճառ կը դառնափին։ Նա լուիկ կը հնձէր, կը դանդառէր բաղդից և կեանքից, իւր փառքը իրան դժբաղդութիւն կը համարէր իսկ զափնինքը փուչ։ Երբ Տփխիսում 1886 թ. առաջին անգամ ներկայացրեց Օթէլլօ, ներկայացումը վերջանալուց չետու հիացած ամբոխը խոնւած բեմի զըռների առաջ չէր դիտեր ինչպէս չափնել իւր հիացումը այս միջոցին Աղամեան, մի քանի րոպէ առաջւայ այդ անարկու Մաւրիսանացին իւր առանձնասենեակում ընկած սեղանի վերաէ լալիս էր և հնձկլառում։ Ի՞նչ էր պատճառը... ոչ ոք դիտէր, բայց ինքը առարկում էր թէ երբէք հանդիսաւում չէրնէր։

Նա շատ զիւրագրդիու էր, անքան շուտ բորբոքուում էր, որքան և շուտ հանգում, բայց շատ անգամ կը լինէին զէպքեր, չնչին, անկարևոր պատահմունքներ, որոնց վերաէ նա օրերավ կը մտածէր և կը խոկար։ Ահա ակսպիսի զէպքերում նա խոկոն կը չափնէր մօտիկ ծանօթներին իւր միտքը զբաղեցնազ խնդիրը և միրաը հանդարտեցնելու համար կը սպասէր նոցանից սփոփանք։

Եւայի աղջիկները մասնաւոր համակրանք էին զգում

զէպի նա, որին պատասխանում էր մեծ արւեստագէտը ոչ անտարբեր։

Իսկ թէ ինչպէս էր նա վարւում իւր թշնամիների կամ իրան վնասել ջանացրողների զէմ, քաղում ենք իւր մի բարեկամին 1887 թ. սեպտ. 9-ին թէողոսիաից գրած նամակից հետեւեալը։ «Ս.-ին ընդհակառակին խնդրեմ որ ներէք և մինչեւ անգամ եթէ կարելի է օգնէք իրեն։ ամեն մարդ իրաւունք ունի իւր ապրուստը ճարելու, և եթէ դորա համար գործածած միջոցները կոպիտ կամ անվագել լինեն, պէտք է նորա առած դաստիարակութիւնը աչքի առաջ ունենալով նոչպէս և կեանքին հանգամանքները՝ ներել նորան, և եթէ կարելի է տրդորելով ուղղել ևնչ արած սիրելիս, աչժմ ես առաւել հաստատած եմ այս սկզբունքին մէջ, ներել բոլորին հանգամանքները քննելով, ոչ ոք լիովին իւր մեղքին մեղաւոր չէ. զաղղիացի մի փիլսոփակ ասում է. «tout comprendre c'est tout pardonner», ամենահն ինչ հասկանալով ամենին ներել, մէկին վնասելով միւսին չ'օգնել»։

\* \* \*

Նորա կեանքը ծանօթների և բարեկամների շրջանում. —Երեակազել Աղամեանից աւելի մի ընկերական մարդ, բնութեան ադրբան չնորհքներով օժտւած, շատ դժւար է. Ընկերական շրջանում նորա հետ նստել, խօսել կատակել արժէր։ Նա սրախօս էր, կատակող և սիրում էր երկար խօսել երբ նիւթն էր զեղարւեսար և սպիրիտիզմը, որին հոգւով մարմնով վերջերս անձնատուր էր եղած, Յաճախ խօսում էր նաև բանաստեղծութեան, աստեղագիտութեան և բժշկութեան մասին։ Նա սիրում էր այն անձանց որտնք ո և է զաղա-

փար կամ ճաշակ ունէին վերովիշեալների մասին։ Ուրիշ ինչ բանի վերակ որ խօսէին, նա ակամալից կը լսէր բայց բոլորովին ուշադրութիւն չէր գարձնէր։ Իւր ծանօթների և բարեկամների համար շատ հաճելի էին այն ժամերը որը կ'անցկացնէին Աղամեանի տեսակցութիւնը վագիելով։ Միայնակութիւնը նորա համար անտանելի էր նա կը դունէր և սէր ցոյց կուտար այն ամենքին որոնք կ'ալցելէին իրան, առանց խարութեան վիճակի և կոչման։ Բայց իւր տեսնւած մարդկանց բոլորին չէր կարելի անւանել բարեկամ, նա բոլորի հետ անկեղծ չէր։ Մեր հընդգամեաւ ընկերակցութեան միջոցին ևս մի անձի տեսակ միայն որին Աղամեան կոչում էր իւր միակ բարեկամ և որին անպարհան հաւատում էր Դա Աղեքսանդր Ստեփանեանցն է որի անունն ու վիշտակ պահեց մինչև մահ։ ան անկողնում։

\* \* \*

Իւր ընկերների հետ։—Աղամեան իբր զերասան, իւր կենաց օրերի մեծ մասը, արհեստի բերմամբ անց էր կացնում իւր ընկերների հետ։ Նա մի առանձին թեթևութիւն էր զգում երբ բարձր եօս տոնդից իջնում էր իւր ընկերների շրջանը, որոնց մէջ նա պէտք չունէր ձեւակերպութիւնների։ Աղամեան սիրում էր իւր ընկերների հետ խօսել զիմաւորապէս զերասանական արեստի մասին։ Նա որ շարունակ կարդում էր թատրօնական գործի վերաբերեալ ամեն նորագոյն գրւածք, կուզէր մասնակից անել իւր ընկերներին ևս իրա կարդացածին։ Բայց նա սովիած էր շատ անգամ գալութեամբ վիշել որ իւր ներ կալին, որ ոչ թէ գեղարւեստի մասին մի ընդունւած

ծշմարտութիւն հասկանալու, այլ մի ընտիր նախադասութիւն անգամ ըմբռնելու և բացատրելու շատ անդամ անկարող կը գտնւէին։ Թող որ չատերը զեղարւեստի և իրանց կատարած պաշտօնի նկատմամբ տարրական տեղեւ կութիւններից անգամ զուրկ էին։ Նա շարունակ կը լորդութէր իւր ընկերներին հաշակ զարգացնող և գեղարւեստի վերաբերեալ գրւածքներ կարդալ։

Աղամեան իւր ընկերակից զերասանների մեծի և փոքրի հետ հաւասար սիրով և մտերմութեամբ կը վարէւ։

Հատ լաճախ երբ ո՛ և է պատճառով նեղանար իւր ընկերներից մէկի վերակ, և ապա զգար իւր սիսալուրը, ամենալին խանարհութեամբ կը մօտենար, կը խոտպահնեւէր իւր սիսալած լինելը, ներումն կը ինդրէր, միով բանիւ ալզ վիրաւորւած սիրառ սիրաշանելու համար ոչ մի միջոց չէր խնակէր։

\* \* \*

Մի քանի խօսք մինչեւ աչժմ տպւածնորակ կենսագրութիւնների մասսին։—Զը նակելով որ թէ մի քանի սուս թերթեր, ինչպէս և հակերէն հրատարակութիւններ, միենուն ժամանակ քսան և հնգամեաւ բևեմական գործունէութիւն Պ. Հ. Աղամեանիու տեսրակը հրատարակիւ ևն հոչակառոր արևեստագէտի կենսագրութիւնները, բայց առանց բացառութեան բոլորն էլ շատ համառօտ են և լի սիսալ ու անձիշդ անդեկութիւններով։ Աղամեան շատ անփոփթ է եղած իւր ձիշդ ինքնակենսագրութիւնը կազմելու և եղածների պակասութիւնները ու սիսալները ուղղելու։ Հետեաբար կարելի է բացարձակապէս ասել թէ Աղամեան մինչ օրակենսագրութիւն չուն ի։ Աղամեանի ձզրիս և

մանրամասն կենսագրութիւնը անհրաժեշտ է: Նա սովորական տաղանդներից չէ որ ինքն իրան ծաղկի, ուռածանակ և անփշատակ անցնի մեր միջից: Նորա կենսագրութիւնը անհրաժեշտ է և իրը դասագիրք կարող է ծառապել նրանց՝ որոնք կամենում են բեմին ծառապել Աղամենի մանրամասն կենսագրութիւնը անհրաժեշտ է հայ թատրօնի ապագայ տարեգրին, որովհետեւ պատմագրողը հասնելով մինչև Աղամենի բեմի վերաբ հանդէս գալը՝ ակամայ կանդ պիտի առնէ, նա երկար պիտի խօսի թատրօնական այն հակա վերանորոգչի մասին, որ էղափին մինչև այն ժամանակ հայ բեմի վերաբ տիրող անզոյն ուղղութիւնը: Աղամենի կենսագրութիւնը անհրաժեշտ է և աղդ պէտք է զրւի իւր ծննդավայում, Կ. Պօլսում, նորա ազգականներից, ընկերներից, միովրանիւ նրան մօտիկ շըշապատողներից նորա կեանքի և գործունէութեան սկզբնաւորութեան վերաբերեալ բոլոր նիւթերը հաւաքելով վերաստուգելուց իւտո՞ հրատարակութեան տալով: Ան ժամանակ կարող ենք հաւատացած լինել որ Աղամենի կենսագրութիւնը զրւած է:

Նորա տպւած կենսագրութիւնները քննադատել ամբողջապէս՝ զա մեղ շատ հեռու կը տանէր, մենք կը բաւականանք մի երկու տեղեր միայն լիշելով, որոնց անձշութիւնը ակներեն է: Ա. Աղամեն երբէք չէր կարող զինւորական ծառապութեան մէջ մտած լինել Տաճկաստանում, քանի որ զինւորական ծառապութեան դաները փակ էին քրիստոնէից համար. (զինւորական բարձրագոյն սպառակութիւն գերմանացի փաշաները վերջին տարիներս կոչեցան պաշտօնի բացառապէս, պահելով իրանց գերմանական հպատակութիւնը): Քրիստոնեանները միմիտն կարող են լինել զինւորական բժիշկ, վիրաբուժ կամ դեղադորձներ, բայց Աղամենի կենսագրիները լիշում են մի-

միայն զինւորական ծառապութեան մասին՝ որ սխալ է: Բացի դրանից Աղամենի նման երկչոր, թողլ և վառերեակալութեան տէր մարզը զժւար թէ չանձնառութինէր զինւորական ասպարէզում իւր ոչերը փորձելու<sup>1)</sup>. Բ. Աղամենի կենսագրութեան մէջ հաղիւ լիշած է իւր զիմաւոր քաջալերողի և մեկենասի հանգ. Յակոր Բէ՛ Պալեանի անունը: Ազդ անունը ուկի օղակներով հիւռած է Աղամենի աստիճանաբար զարգանալու պատմութեան հետ: Նա տեսնելով Աղամենի խաղը, Զրաղանի<sup>2)</sup> այդ հանձնարաւոր ճարտարապետը, խմացաւ որ իւր առաջ կանգնած է եղակի տաղանդներից մինը, եղակի ալնպէս՝ ինչպէս ինքը:

Պէտք է Կ. Պօլսում բաւականի ապրած լինել զգալու համար թէ ինչ կամքի ոչ և զեղարեկասի տէր պէտք է ունենալ որ մի բէ՛, արքունի զիմաւոր ճարտարապետ, թատրօնական խմբի զլուխ կանգնելու չափ խոնարհի: Նա ոչ միայն աղդ խմբին հովանաւորեց, ալ և կառուցեց Օրթագիւղի բարեսէր ընկերութեան զեղեցիկ թատրոնը: Նորա

1) Հանգուցեալ հաշոկաւոր երկեցաբանն Յ. Պարոնեան, Կ. Պօլսում՝ Աղամենի ներկայացրած ««Թէլլո»»-ից յետոյ գլում էր իւր «Արկաց»-ում:

«Արկաց»-ում մէ՛ունիք, որ իւր հաշոյն համար կը մեռնի և կը վերակենացլի ամեն կիւրակի: Աս ալ պղտիկ ապացոյց մ'է թէ հայերն ունին զիւցալնութիւն... Ըատերաբեմի վրայ, թէ չէ՞ն փախենաը մակէն և թէ նսխապէս ապա՛տվութիւն որւի իրենց թէ քանի մը վայրիկանէ յետոյ նորին պիտի կենդանանեան: Աչա բարյոյականն զօր կը քաղիմ զիւցալնական ներկայացումներէ»:

«Թատերաբեմին գույքս Աղամենին ալ անշոշտ մեզ նման սովորական մահկանացուներէն է որ վառեակ մ', իսկ մորթելու կը վախնայ, իսկ թատերաբեմին վրայ ապիծ կը գառնայ»:

2) Հրաշակելու պալատ թօնֆօրի ափում:

մասին ի միջի ալլոց պատմում են հետևեալը, Այդ գեղարքսատական բարձր ճաշակի տէր անձը, այն աստիւ ման զրաւեցաւ Աղամեանի գեղարքսատական ընդունակութիւններով, որ գիշեր ցերեկ իւր մօտ էր պահում: Աղամեան անհաշիւ միսում էր, առաւօտեան զարթնում և տեսնում էր որ աներեսով մի ձեռք լցրել է իւր զրպանը ոսկի զրամներով, Յաջորդ գիշեր զարձեալ դատարկ էր զրպանը, բայց նոյն աներեսով ձեռքը նորից էր լցրած. և ալսպէս չաջորդաբար: Յ. Պալեանի իշխանական ձեռքն էր ալդ: Գ. Աղամեանի բնամական ընդունակութիւնների զարգանալուն պատճառ եղան երկու տաղանդաւոր դերասաններ որ այն ժամանակ լայնի էին իրը լաւ զրամատիք գերեր կատարաղներ, դոքա են լըջեան և Թ. ֆասուլիամեան: Այս մասին մեզ թէե պակասում են մանրամասնութիւններ, բայց ալսպանը կասենք որ ինչպէս պողվար սրում է զանակը, ախտէս էլ տաղանդը ոգեսու րում է ընդունակութիւններին (ասլինքն մի տաղանդաւոր դերասան ոգեսրում է ճրանց որոնք օժտւած են ընդունակութիւններով): Մենք զիտենք որ ինչպէս լըջեան նոյնպէս և ֆասուլիամեան հին զպրոցի հետեւզ էին, նմանապէս Աղամեան նոր սկսելիս, բայց նորանց խաղը մեծ ներգործութիւն էր ունենում նորափի դերասանի վերակ, քանի որ նոյն բեմի հրավի էր առջորում: Անցաւ ժամանակ, Աղամեան աւելի մեծ կոչումն ունէր. նա զգաց հին զպրոցի սիալները. ինքնաշխատութեամբ ուղղեց և կաղմակերպեց իւրը:

Սոքա մշակելի հարուստ նիւթեր են Աղամեանի կենսագրութեան, մինոյն ժամանակ կարեոր էջեր՝ հաջթատրօնի զարգացման պատմութեան համար: Բացի Յակոբ Բէլ Պալեանից, արժանահաւատ անձինքներից լսած ենք իրեն Աղամեանին նիւթապէս և

բարոյապէս օգնող անձն՝ Պ. Նշան Յտեանի մասին: ԹէԿ Աղամեանի կենսագիրները լուռում են այս անձի նկատմամբ, բայց մեծ արևեստագիտը իւր 1880 թ. Տիֆիխում տպւած բանաստեղծութիւնների հասորի առաջին տողերում «առ. երգք իմ» վերնագրով ոտանաւորի մէջ ասում է.

Զինչ արեգակն ի շողն ադրուն

Հոգի ծաղկանց տաչ կիսամեռ

Զեր ալ տկար նշխարներուն

Կեանք տւաւ Օտեան պաշտպանս ու տէր:

Հետաքրքիր է իմանալ, Աղամեանի համար ալսչափ նշանակութիւն ունեցող մի անձն, նորա կեանքի և գործունէութեան վերաէ ինչ ներգործութիւն է ունեցած:

## Բ.

Աղամեան Կ. Պօլսում: — Նորմախիջեանում: — Աղամեան կովկասում և նորա ունեցած ներգործութիւննը Աղամեանի խաղի նկատմամբ: — Աղամեան Ռուսաստանում: — Վերջին այցելութիւն է Կ. Պօլս և Զմիւռնիա: — Վերջին օրեր:

Աղամեան Կ. Պօլսում: — Նախախինամութիւնը Աղամեանի ծննդավայր Ծնտրել էր արևելքի չքեղ մայրաքաղաքը, Նորա մանկութեան և պատանեկութեան առաջին տարիների վերաբերեալ նիւթերը թողնելով ապագաէ կինսագրողին՝ մի քանի խօսք միան կ'ասենք նորա նախկին թատրօնական տարիներու մասին: Աղամեան 16—17 տարեկան հասակում պէտք է որը թիմ դուրս եկած լինի: Իւր համակրելի դէմքով, հնչիւն, զգացուն ձախով և մաքուր արտասանութեամբ իւրկոյն իւր վերաէ ուշագրութիւն դարձնել տեսց: Տեսնում էին այս աղապէս վերաէ մի բան, որ սովորական աեսնւածներից տարրեր էր, նա մի տեսակ մագնիս ունէր իւր մէջ՝ որ հանդիսականի հա-

էեացքը ակամակ դէպի ինքն էր ձգում: Մի փոքր ապացուց ասածիս: Տարիքիս բոլորավին անհամապատասխան ժամանակից սկսեցի թատրօն չաճախել, ութ տարեկան էի միան: Խոսքորի ասիական ափի Ալիւտար քաղաքամասի Բաղլար-բաշիի թատրօնը, ուր խաղում էր Վարդովեանի փառաւոր խումբը, ուր մասնակցում էր և մեր Ազամեանը, Ներկալացւում էր Խօմէն-Սիւի հոչչակաւոր «Թափառական հրէան»: Այդ պիէսան որ իւր մէջ պարունակում է բազմաթիւ դժւար, ծանր բնաւորական դերեր, այդ պիէսափ ներկալացւումը կրկնում ենք մի ապացուց է այն ժամանակաւ խմբի մեծ և ընտիր ոժերից կազմած լինելուն: Եթէ չեմ սխալում, խումբը կազմւած էր 35—40 զլիսաւոր և երկրորդական գերասանուհի և գերասաններից: Ազամեան այդ խմբում կատարում էր երիտասարդ-սիրահարի դերեր: Խոկ իմ տեսած «Թափառական հրէան»-ում կատարում էր Գաբրիէլ միսիօնար քահանակի դերը: Պիէսան ունէր իւր մէջ և մի շքեղ կենդանի պատկեր ուր ամբողջ գործող անձննքը ներկալանում էին իրանց դերերի զլիսաւոր տեսարաններում: Այդ կենդանի պատկերում ներկալացւում էր ի միջի ազոց Գաբրիէլ քահանակի (Կարծեմ) վայրենիներից խաչելը: Կատաղի ամբոխը Քրիստոսի պաշտօնէի վերաէ յարձակած ուզում է քրիստոսական մահ տալ նրան, խոկ քահանան անձնատուր եղած խաչողներին, իւր երկնադոն աչքերը երկինք ամբարձած, կարծէք մեծ վարդապետի վերջին ներողական խօսքերն է արտաքրում լուելեան: Այդ առաջին անգամն էր որ տեսնում էի մեծ արևոտագէտին, մանուկ հասակում, անկարող գատելու կամ ըմբռնելու, բայց չը գիտեմ ինչ աներեսով սլաքներ, որ մահաւան պատրաստողի աչքերից կ'արձակւէին՝ բերին գամեցին սրառում այդ գիշերւանից «Ազամեան» անունը: Ովքէր էին, ինչ խաղացին մնա-

ցեալները, որոշ ոչինչ չեմ լիչում, բացի Գաբրիէլ քահանակից և «Ազամեան» անունից: Նա երկար չը մնաց այդ խմբում: Նա առհասարակ կ. Պօլուում մի քանի տարիներ շարունակ չէ խաղացել այլ՝ ընդհատմամբ: Հատ անդամ մի փոքրիկ տժգոնութիւն կամ մի չնչին պատճառ առիթ էր լինում որ բեմի այդ անսպիւտ զարդը ձգէ և հնաանակ: Ի՞նչ էր և ինչ կարող էր դառնալ Ազամեան՝ այդ մասին այն ժամանակաւ լրագրութիւնը համարեա լուսում է: միան զրում էին «գեղեցիկ խաղաց», «աղէկ գերասան է», «ազւոր ձեւեր ունի» և պլն. Նորա և առհասարակ թատրօնի մասին քննադատութիւններ սորանից աւելի բան չէին գրում: Խոր ընկերակից գերասանները անշուշտ կը տեսնէին այդ փոքրիկ մարմնոն և մեծ գանկին մէջ մի արտաքող կարգի տաղանդ կատ թագնւած, բայց միթէ նախանձը կը թողլատրէր նոցա այդ բանը խոստովանելու ընկերական նախանձ՝ որ ընդունակութիւններին բեմից հալածող զլիսաւոր տարին է: Խմբի կառավարչին էլ ձեռնուու չէր Ազամեանի գերազանց ընդունակութիւնների խոստովանութիւնը: Այն ժամանակ սահապւած պիտի լինէր այդ տ ա չ ի ն ամննքից շատ ուժիկ տալ: Բայց թատրօն չաճախող միջակ զարգացման աէր հասարակութիւնը Ազամեանի մասին աւել էր արդէն իւր վճիռը: «Ա դ ա մ է ա ն շ ա տ ա ղ ւ ո ր կ ը խ ա ղ ա չ կ ո ր»:

Ազամեան խնդրանօքս ցուցակագրած և ինձ լանձնած էր մեծ թէ փոքր այն բոլոր պիէսանների և դերերի անունները՝ որոնց ներկալացրել է. բայց զժբաղդաբար մի անակնկալ դէպբի բերմամբ կորաւ այդ հետաքրքիր ցանկը, բայց ամբանը կարող ենք ասել թէ նա խաղացած է մեծ և փոքր 300-ից աւելի զանազան դերեր: Կոմիղեաններում, դրամաններում և ողբերգութիւններում:

Այս մասում մեր խօսքը վերջացնելուց առաջ աւե-

լորդ չենք համարիր 1867 թ. լունւար 14 թիւ 106  
«Փամանակ»<sup>1)</sup> թերթից հետևեալ կառործ դուրս բերել  
որպէս զի ընթերցողը ըմբռնէ թէ մամուլը, հասարակու-  
թեան կարծիքի առաջնորդը ինչ հասկացողութիւն ունէր  
բնմի նկատմամբ:

### Առանձար Ամատունի

«Անցեալ շաբաթ երեկոյ Արեւելեան թատրոնին մէջ  
առաջին անգամ ներկաւացում տրեցաւ Առանձար Ամա-  
տունի անունով թատերգութիւն մը որ մեծարդու Յ. Սվա-  
ճեանի հեղինակութիւնն է, թատրոնը մեծ բազմութեամբ  
լցւած էր և ներկաւացումն ալ խորին տպաւորութիւն  
ըրաւ հանդիսականաց վրայու»

«Առանձար Ամատունի Յազկերտի ժամանակ Քաջաջաջ  
անուն իշխանի մը մատնութեամբ գերի կինայ պարսից  
ձեռք և կը բանտարկւի: Յազկերտի կինը<sup>(\*)</sup> զան աղ-  
ատել կուղէ և անոր հետ կենակցիլ. Առանձար իւր աղա-  
տարարին դէմ ապերախտ չը գտնելու առաքինութեան  
հետ՝ իւր Աստուծոն, հայրենիանցը և ընտանեացը սիրոն  
ալ չը դրժելու արիութիւնը կունենալ, հրաման կը ստա-  
նայ թագուհիէն<sup>(\*)</sup> իւր հայրենիքը դառնալու: Քաջաջ  
Առանձարի 8 տարեկան որդին իւր քոլ պահած կը սնու-  
ցանէր, Առանձարի կինը իւր որդոյն երեսը տեսնելու հա-  
մար մուրացիկ շրջելով Քաջաջի դուռը կը դեգերի. Քա-  
ջաջ կիմանայ Առանձարի կինը ուր ըլլալը և կ'երթաց  
զանի բոնաբարելու, չը լաջողած կը դառնայ, բայց վրէժ-  
ինդրութեան չար ոգւով բոնաբարւած կը համբաւէ:  
Առանձարի որդին իւր մօրը կը ծանօթանայ, բայց զէշ  
համբաւոն համար կը մերժէ զան: Քաջաջ որի՞չ անդամ

<sup>1)</sup> Խմբագերն էր Ս. Փափաղեանց:

ալ նոյն փորձը կընէ և Առանձարի կինը գտնւած տեղը  
կերթաէ և առանձին կը գտնէ զան, կինը մեծ ընդդիմու-  
թիւն կը ցուցնէ, որդին որ կը լրաւեէր մարը (մօրը)  
վրաէ կը հասնի<sup>(\*)</sup>: Քաջաջ կը փախչի: Մթութեան մէջ  
Քաջաջ կը հանդիպի Առանձարին՝ որ Պարսկաստանէն  
կը դառնար. Քաջաջ աղքատ Ամատունի մը ձեանալով  
Առանձարի համակրութիւնը կը ստանար, Առանձար իւր  
ընտանեաց վրաէ տեղեկութիւն կը հարցնէ, Քաջաջ խիստ  
զէշ կերպով կը նկարագրէ կինը բարբը, մինչև անգամ  
իւր ութամեալ զաւակն ալ սպանւած կը ցուցնէ, Առան-  
ձար կը շփոթի, չուզեր հաւասար, բայց Քաջաջ կը հաս-  
տանէ ցուրտ անտարբերութեամբ մը և կինը գտնւած  
տունը կը զեկուցանէ: Առանձար կերթաէ զիշեր ատեն  
կը մտնէ պատուհանէն ներս, իւր սիրելի թիկնապահն  
ալ հետը, որ ի միասին բանտարկւած և անոր հետ  
աղատւած էր, կը տեսնէ իւր կինը, կը ճանաչէ, անոր հետ  
ալ նրիասարդ մը որ կը ննջին: Առանձար սուրը  
կը քաշէ, մակրը կ'արթըննալ, «տղամ» աղաղակելով  
կը բանէ աղան: Առանձար կը շփոթի, և կը չուզեր. խուռն  
ժողովուրդ ուրախութեան աւետիս կը բերեն թէ Քաջաջի  
վրաէ աշտարակ<sup>(\*)</sup> մը վլչելով զինքը խորապեած տեսներ  
են և թէ ազգ զառն վիճակին մէջ կը միսիթարսի եղեր  
որ նոյն միջոցին Առանձար ալ առանց զիտնալու իւր  
կինը և որդին պիտի սպաննէ՝ որով ինք վրէժն առած  
կըլլաւ Առանձար կը մթափի, խափւած ըլլալը կիմանայ  
և միսիթարութեամբ կ'ողջազուրէ իւր կինը և որդին»:

«Այս համառօտ պատմութենէն՝ որ ամեն մասերով  
ամբողջ չը կրնար համարւիլ, կ'երեաւ թէ թատրերգութիւնը  
ինչ կապակբավթիւն, զարձւածք<sup>(\*)</sup> հետաքրքրաշարժ  
տեսարաններ<sup>(\*\*)</sup> հաշմունք տեսղ և արգանատիչ պատ-  
կերներ ունի<sup>(\*\*\*)</sup> ասոնց հետ հան աւելցուր զեղեցիկ լե-

դուն, իմաստալից խօսքերը, (չէ թէ անհեթեթ բացագաճ-չութիւններ) (‘‘) ջզմարիտ աստուածպաշտութեան, հայ-րենասիրութեան և ընտանեսիրութեան վրայ զմալլելի բա-ցատրութիւնները որոնք բոլոր հանդիսականները գոհ-ըրին, և սաստիկ ու ստէպ ծափանարութեամբ ընդունե-ցին և զնոն ինքն հեղինակը կրկին անդամ ի տես հրա-ւիրեցին, Ազապիտի թատրերգութիւն մը իւր տեսակին մէջ առաջին անդամ է (‘) որ կերեալ աղդապին հեղինակու-թեանց թատրեաբեմին վրայ Նը լուսանք որ ուրիշ ան-դամ ալ կը ներկայացի սոն թատրերգութիւնը, և դե-րասաններէն ումանք ալն անդամ աւելի աղէկ սերտած-կըլլան իրենց մասը», 1867. լունվարի 14. թիւ 106-«Փամ անակ»:

Ազդ միջոցներին Ս. Փափազեանի նման մի խմբադ-րից սրանից աւելի չնորհքով քննադատական չօդւած չէր կարելի սպասել Զարմանալին ան է թէ ալդ անբովան-դակ, անճպատակ և ոչինչ բնականութիւն չունեցող գըր-ածքին ինչ խօսքերով գովաբանել են, Հովկի հասկա-ցողութեան չափը եթէ ալս լինի հասկանալի է թէ հօտինը ինչ կը լինի. Շատ բնական է որ ալս տեսակ ողորմելի խմբադիրներ ոչ թէ թատրոնին կամ դերասանին չեն կա-րող ուղղութիւն տալ, ալլ եղածն էլ կը փչացնեն՝ ան-դիտակցաբար գովաբանելով կամ պարսաւելով. Ահա ակտ-տեսակ հողի վերայ էր զարդանում մեր ապագայ զար-ձացման առարկան, Պետրոս Ազամեան:

Հետաքրքիր է նաև այստեղ վիշել նոն թւականի վիշեալ թերթի 11 մարտ 110 թւան մէջի լուրը. մարտի 7-ին երեքշաբթի օր Նաումի թատրօնում ներկայացրել են Վարդանանց ողբերգութիւնը հեղ. Սէղէֆձեանի ի ներ-կալութեան անթիւ բազմութեան, նոն հանդիսի խօսքերով «շատերը կը հաւաստէին թէ ալս տարի և ոչ մէկ թատ-

րօնի մէջ և ոչ մէկ ներկայացման անչափ բաղմութեան եղած է»: Յիշեալ ներկայացման ժամանակ Վարդանալ որդու գերը կատարել է մեր Ազամեանը.

\* \* \*

Նոր-Նախիջևանում.—Կ. Պօլսի հալ դերասա-նական խումբը որ բացի հակերէնից ալն ժամանակներ կը ներկայացնէր երբեմն նաև թուրքերէն (լուկ աժմ մի-միան թուրքերէն) մենաշնորհ (տոնորդ) էր Յակոր Վար-դովեանի. Բացի նրանից ոչ ոք իրաւոնք չունէր հայե-րէն կամ թուրքերէն ներկայացումներ տալու: Ազդ էր պատ-ճառը որ Կ. Պօլսում թատրօնի ամենածագկած ժամա-նակներն անդամ խումբը մի տեղ էր խաղում, որ քա-ղաքի զիրքին շատ անչարմար է: Թէի դերասանները ան-ձախ հարստանարուում էին Վարդովիսնից, բաց տախուած էին շատ զրկանքների համբերել, որովհետեւ օրէնքը նրանց ձեռք ու սաքը շղթալած էր, Եւ ազդ էր պատճառը որ մինչև 50 հոդոց բաղկացած դերասանական խումբը, որի մէջ կալին ֆասուլեանեանի, Ոշառւու, Նալեանի, Պէն-լեանի, Թրեանցի պէս ուժեր մնում էր հաւաքւած, առանց ցրւելու: Խմբին ամենքից աղատասէր և անհանդարա ան-դամը Թ. Ֆասուլեանեանն էր, որ մինոնց ժամանակ խմբի գլխաւոր դրամատիք ուժն էր. Օրէնքի հլու հպատակուոր-ներից չէր նաև Ազամեան: Թող որ նա երբէք չէր համա-ձանուում և չէր խաղում թուրքերէն, Ալս կողմից նա խմբի միակ բացառութիւնն էր: Շատ անդամներ մի փոք-րիկ պատճառ՝ և ալլ ես Ազամեան չ'կար խմբում Վար-դովեանի խմբում աւելանում էր զդգուութիւնները: Ֆա-սուլեանեան մոնչում էր իրքի մի զդթալած առխւծ, և վերջապէս հնարքը դառն իւր շղթաները փշելու, Նա

ծանօթ էր Ռուսաստանի և Կալիկասի հակաբնակ կենդրոն. Ներին, և արդէն կատարած էր իւր կնոջ հետ մի գերասանական ճանապարհորդութիւն. Վարդովեանից զժգողերասաններից կազմոց իւր խումբը և ճանապարհ ընկաւ դէպի Նոր-Նախիջևանից իր զուտ հակախօսքաղաք 1870-ին. Նոյն խմբումն էր գտանուոմ և Աղամեան՝ առաջին-սիրահար գերերի համար: Եսիմիջևանում Աղամեան տիրապետում էր ըսմին. համակրութիւն և զնահատութիւն դէպի երիտասարդ ասղանդը հետզհետէ աւելանում էր Աղամեան աղտուղաց որ «աղէկ» կը խաղաղ կորուից աւելի մի բան կաէ իւր մէջ. նա տեսաւ որ բացի իւր ապրած աշխարհից մի ալ աշխարհ կաէ և իւր տեսած հորիզոնից ուրիշ հորիզոն:

Բաց ալդ ամենը երկար չը տեսէց, մի քանի ամիս և ներկայացումները վերջացան: Խումբի մի մասը վերադառն Պօլիս, մի մասն էլ մնաց այնտեղ ճանապարհածիս չ'ունենալու պատճառաւ: Ալդ ակամազ բանտարկւածների թւին էր պատկանում նաև Աղամեան: Նոյն խմբումն էր և կատակերգակ դերասան Թրեատր (Թուրիան) որ խմբի ցրւելուց իւսու առժամանակ հրաժեշտ տալով բնմին ձեռք էր առել ներկարարի վրձնը՝ առաց ողբերգութիւն: Ճեկուր ինձ մօտ, Աղամեան, վրձնս քիզ էլ կ'ապրեցնէ ինձ էլ, Աստուծու պարզեածից քեզ էլ բաժին կը հանենքո: Պրութիւնը կրիտիկական էր, և հարկ չկար խնդիրը կրկնել տալու: Աղամեան ապաստանեցաւ Թրեատրի մօտ: Ալդ ժամանակ իր զդեստ նորա վերակ մնացած էր իւր թատրոնական Փրակը...: Բաւական օրեր Աղամեան Թրեատրի տանը բանտարկւած մնալուց իւսու ձեռք բերեց ճանապարհածիս և ուղերւեց կ. Պօլիս:

\* \* \*

Աղամեան կովկասուում և նորա ունեցած ներգործիւնը Աղամեանի խաղի նկատմամբ.—Աղամեանի խարնախիջևան ուղերւելուց ձիչա 9 տարի էետո՛ 1879-ին Տիֆիխուում կազմւած թատրօնական մասնաժողովի կողմից հրաւիրւեցաւ կովկաս: Ալդ տասն տարւաւ միջոցին որ նա շատ քիչ անգամ խաղացած էր՝ չէր արել ոչ մի մասնաւոր չառաջաղիմութիւն, նա չէր խաղում գլխաւորաբար համերէն ներկայացումների հաղւագիւտ զառնալու պատճառաւ: Հետեաբար 79 թ, մեր տեսած Աղամեանը համարեա 70 թ. Աղամեանն էր: Բայց աղպէս չ'եղաւ կովկասում: Լրագրութիւնը ամբողջ էջեր էր նւրբում թատրօնին, թէև իւր խորհուրդներով և քննադատութիւններով մոլորեցնում էր գերասաններին, բաց թատրօնի և մասնաւորաբար Աղամեանի խաղի նկատմամբ նորա ունեցած ներգործութիւնը անուրանալի է: Տիֆիխի հաջ հասարակութիւնը, որի հաշակը բաւականի զարգացած էր օտարազգի դերասանների խաղի ներքու, չէր կարողանում իւր ծարաւը չափեցնել տեղական հայդերասանական խմբի ներկայացումներից, որոնց մէջ զեղարեւստական համարեա ոչինչ չկար: Ալդ ներկայացումները թէև մասամբ զոհացնում էին ժողովրդեան միջին կամ սոսորին դառակարգի պահանջները, բաց զարգացած, տեսած հասարակութիւնը կամ հաջոց ներկայացումներին սոսք չէր դնում և կամ զալիս էր ծարաւ, վերադանում էր պապակած: Տիֆիխի թատր, մասնաժողովը լոււ ըմբռնել էր, և ալդ էր պատճառը, որ հասարակութիւն զեղարեւստական ծաշակին զոհացում տալու համար իւր աչքերը դարձրեց դէպի արևմտաք՝ կ. Պօլիս:

Բարձրացաւ «Աէր առանց համարման» ներկայացման վարագուրը և հասարակութիւն աչքերին ներկայացաւ այն՝ որի մասին մինչև այն ժամանակ զաղափար

չունէր: Բացի չնորհալի, գեղարւեստական խաղից՝ հայ լեզուն հնչում էր բեմից մի բոլորվին անծանօթ քաղցրութեամբ և ներդաշնակութեամբ. Նա դիւթում էր լսելիքը, նա իրեւ կակդեցուցիչ սպեղանի թափուում էր մաէրինի լեզւի համար անտարբեր և քարացած սրտերի վերակ և նրանց փափկացնում: Հասարակութիւնը այդ գիշեր գուրա ևկաւ թատրոնից բոլորվին կախարդւած: Այդ օրւանից հասարակութեան կարծիքը դէպի հաչ թատրոնը բոլորվին բարեփոխւաց էր: Նա չոշափելի փաստեր էր առևնուում այն կարծիքին թէ մալինի լեզով կարելի է ունենալ թատրոն, լսել համամարդկալին գաղափարներ, և գոհացնել գեղարւեստական ճաշակի թէն ալդ օրւանից ժողովուրդը աւելի պահանջող դարձաւ, բայց այդ իւր կատարեալ զիտակցութեան արդիւնքն էր: Այս երեսով, դէպի առաջ աւնւած ալս քաւլը, շատերի համար, ոչ միան վնասակար, այլ չարազուշակ և կործանիչ էր: Այս այն բուհը էին ասում, որոնք հաչ թատրոնը միմիան իրանց սեփնականելու լաւակնութիւնն ունեին: Նորանց կարծիքով ժողովրդեան աչքը ըստ պէտք էր բաց անել՝ ցուց տալով նրան թատրոնը՝ բուն իսկ իւր կոչման մէջ: Պէտք էր իսկ ու փթած մրգով կերակրել նրանց՝ որոնք հասածի և ընտիրի մասին գաղափար չ'ունէին:

Բայց աւելորդ էր վրդակիլը. թատրոնական գործին զլուխ կանգնողները պէտք է գոհացնեն մի զարդացած հասարակութեան թատրոնական ճաշակը: Ահա գործի բոլոր գաղանիքը՝ որ աւսունեան միշտ պիտի լածողի լիուլի կատարելով, իսկ ապարդիւն ու անլաջող պիտի մնալ չը կատարելով:

Աղամենան իւր ընկերներով մեծապէս գործակցեցաւ հասարակութեան գեղարւեստական ճաշակի զարդանալուն, բայց նա անպատող ծառ չէր, որ միան իւր տերե-

ներով պարծի և ստերով բաւականանաւ: Նա օգնեց և օգտւեցաւ, սովորեց և սովորեցաւ, ինքը քանի անզամ: Ներ պատկառանքով խոստովանւել է թէ որքան օգտած է Տիփիսի թերթերի քննադասութիւններից, և մասնաւորաբար Տիփիսի որքան իւր լառաջաղիմութեան պատճառ է եղած՝ զնահատելով, առաջ մղելով և բարձրացնելով իրան: Բայց Աղամենան ինքը իւր մէջ ունէր լառաջաղիմելու բոլոր տարերքը, դորա համար կարօտում էր մի մղիչ ոչի և այդ գտաւ նա թատրոնասէր Տիփիսիսցուց մէջ: Նորա քավլերը խոչնդոտի առաջ չէին կանգնէր: Նորա համեացքը սեղմ հորիզօն չէին սիրէր և իւր մտքի թուիչքը ալանում էր միշտ բարձր բարձր իւր լեզուագիտութիւնն էլ օգնում էր լառաջաղիմութեանը: Նա բացի մարդենի լիդպից դրում—կարդում էր Փրանսերէն, լատիներէն, իտալերէն և վիրջներս էլ ուուսերէն<sup>1)</sup>, բայցի Գրիբոեդովի և ալլ մի քանի լաւտնի հեղինակներից նա Տիփիսում մատիկ ծանօթացաւ Նէքսպիրի հետ՝ որ իւր ապագաէ փառքի պասկը պիտի լինէր: Նա ըմբռնեց իւր կոչումը, և սկսաւ ամենան ուշադրութեամբ հետեւել մեծ բանաստեղծի ստեղծագործութիւնների ուսումնասիրութեանը: Նա անզգալի կերպով բայց հաստատ քավլերավ լառաջ էր դիմում: Նոր համբաւը մամուլի միջոցաւ տարածւեցաւ թէ կովկասի ամեն կողմը և թէ Ռուսաստան, 1880 թւականին մի փոքրիկ խմբով նա ճանապարհորդեց Ախալցխա, Ախալքալաք և Աղեքսանդրապօլ, ամեն տեղ իւր տաղանդի:

<sup>1)</sup> Աղամենանի ուուսերէն արտասանութիւնը թէկա մաքուր չէր, բայց նա, մանաւանդ իւր Խուսաստան ճամբորդած: Ճամանակ լաւ սովորած էր այդ եղուն: Թարգմանում էր նըանից ըանաստեղծութիւնները, կարդում և հասկանում էր ուուր հեղինակութիւնները և գըում էր նամակներ նոյն լեզուով:

վերակ հիացողներ աւելացնելով, 1881 ին ևս ալցելոց  
դանձակ և նուշի, որտեղից թռաւ, գնաց Ռուսաստան  
իւր համար պատրաստած դափնիքը հնձելու.

\* \*

Աղամեան Ոռուաստանում:—Տվիխիսը Աղա-  
մեանի համար եղաւ այն՝ ինչ որ միջնակարգ զարոց  
աւարտողի համար է համալսարանը: Նա իւր կարողու-  
թեան մասին կատարեալ զիտակցութիւն ունէր և ադր  
պատճառաւ ներկայացաւ աւելի բարձր, մաքաքաղաքի  
հասարակութեան քննադատութեանը: Տվիխիսեցիք ամեն  
կերպ քաջազներեցին նորան ազդ քայլը անելու: Սա զժւար  
և մտածելու կէտ էր: Աղամեան ուսւ հասարակութեան  
առաջ պիտի ներկայացնէր հակերէն լեզով: Ուունենէր պիտի  
համաձայնէին մի քանի ժամեր նստել թատրոնում և  
շարունակ լսել մի անձանօթ լեզու՝ որի մասին մինչեւ  
այն օր ոչ մի նպաստաւոր զաղափար չունէին: Բայց ով  
որ տեսել է բեմի վերակ ազդ հսկակ հանձարին՝ նա հա-  
մոզւած է որ նորան հասկանալու համար պէտք չէ լեզու  
դիտենալ, նորա դէմքը և աչքերը ամեն ինչ կը հասկաց-  
նէն, ամեն ինչ կը բացատրեն: Ոչինչ հեղինակութիւն չէր  
կարող ասավիսի գովիստով խօսել տալ մեր լեզուի հնչում-  
երի գեղեցկութեան և հսրթութեան նկատմամբ, ինչպէս  
ազդ եղաւ Աղամեանի բերնից հայ լեզուն արտասանելով:  
Դեռ չը լսած, ծիծաղողներ, ծաղրողներ անչափ էին: «Հայ  
լեզամ՞ւ...» հարցնում էին զարմացած մարդիկ տեսնելով  
«Համլէտ»ի և «Օթելլօ»ի լայտարարութիւններ: Բայց երբ  
վարագործ բարձրանում էր և բեմի ներսու սկսում էր  
իւր առաջին խօսքերը արտասանել՝ ծաղըն ու ծիծաղը  
զարմանքի և զարմանքը հիացմունքի էր փոխում: «Ոչ

թէ մաքրով էք զգում նրան, ոչ թէ այն գիտակցութեամբք  
որ նա ընտիր գերասան է, ասում է „Օդեսք. Տելեգրաֆ“  
թերթի չօգւածագիրը, ազ մի ուրիշ, անխմանալի զգացու-  
մով՝ որ կը պարտաւորեցնէ ձեզ կուլ տալ արցանքն,  
սիրել ալդ օտար դէմքը և ալդ օտար լեզուն:

1883 թ. Մոսկվակի ուսանողներից հրաւիրելով  
կը գնակ և դուրս կուգակ «Համլէտ»ի գերասան նոյն թւին  
դնաց նաև Նիժնի-Նովգորոդ: 1884-ին սկսում է խաղալ  
Պետերբուրգում: «Նովոստ»-ի, «Նովու վրէմիտ», «Փակու-  
սվո» և ազ թերթեր միաձայն հոչակում են Աղամեանի  
գերազանց ատաղանդը: Նոյն տարւակ լունիսին Աղամեան  
դնում է Աստրախան, Ռոստով, Խարկով, և ազն և 1885  
թւի մաքսին կինդ կրկին և կրկին անդամներ ացելե-  
լով Պետերբուրգ և Մոսկա: 1886-ին Բաքու և այնտեղից  
դերասանական խմբից հրաւիրեցաւ Տվիխիս: Աղամեանի  
փառքը Տվիխիսից էր սկսել նա թէն չէր սիրում նորան  
շրջապատող լերկ բլուրները և սահմանափակ հորիզոնը  
բայց սիրում էր իրը երկրորդ հայրենիք: Նորա սիրու  
արտիում էր քաղաք մասնիչու: Սկսաւ խաղալ նա իւր  
նոր սահմանափարծութիւնները, «Օթելլօ», «Ուրիկէ Ակօսաւ»  
և կատարելու գործեալ «Համլէտ»ը մէկ մէկ նորութիւններ  
էին որ նա ցուց էր տալիս մեզ, զարձեալ նոյն ովերու-  
թիւնը, զարձեալ նոյն խանդաղատանքը դէպի նա: Վեր-  
ջացնելով Տվիխիսի ներկայացումները և իւր ներկայու-  
թեամբ ծնունդ տալով 86—87 տարւակ թատրոնական սէ-  
զօնին, ամառաւ ամիսները ճամբարողեց Տվիխիսի հայ  
գերասանների խմբով Վլադիկաւկազ, Մողոկ, Պետա-  
գորսկ, Եկատերինոպար, Թէղոսիա և այնտեղից Տվիխիս՝  
ճամռաւ ներկայացումների համար: Նոյն ներկայացում-  
ների շարքում ներկայացրեց առաջին անդամ «Ուր-  
իքապի» գերը, որին վերջերս անչափ սիրում էր՝ մինչեւ

գիշերները նորանով զառանցելու աստիճան, 1887 ին Քաթումից մեկնեցաւ Թէղոսիա, Սիմֆէրոպոլ, Օդէսա, Քիչնել, Պօլտավա, Մոսկվա, Կազան և այնտեղից իւր ծննդավարը՝ կ. Պոլիս:

Այս բոլոր ուղևորութիւնների ժամանակ 1883 թւից մինչև 1888 թ. Աղամեան իւր բոլոր անցած տեղեր թողեց իւր տաղանդի և ընդունակութիւնների վերակ հիացողների ամբաւ բազմութիւն։ Ուսկեղին, արծաթեղին, ընծաներ, ուղերձներ համալսարաններից, անթիւ փունջեր ու պսակներ թափում էին իւր ոտքերի առաջ։ Բոլոր թերթեր զարմանքով խօսում էին այս արտակարգ հակ տաղանդի վերակ ։ Համերն էլ խօսք կամ բառ չէին գտնում իրանց պահանջացումը արտակարտելու, Նորա խաղը քննադատեցին Ռուսաստանի բոլոր թատրոնական քննադատները, որոնց խօսքի նշանակութիւնը և արհեստի նկատմամբ ունեցած հմտութիւնը և գեղագիտական ճաշակը ընդունւած է հասարակութեան բոլոր դասակարգերից՝ Աղամեանին դասեցին մեծ տաղանդների շարքը և աւագութեան աթոռը աւին հայ արևսասագէտին։ Նորա փառքը անչափ մեծացաւ, որ մինչև զարմանք ազդեց իւր հալրենակից Պօլտեղիներին։ Նոքա այն վաճառականին էին նմանում, որ իւր անդին գոհարը չնչին գնով ծախելուց լետու միան հասկանում է նորա արժէքը։

\* \* \*

Վերջին աւցելութիւն ի Ա. Պօլիս և Զ. միւռ. Նիա. — 1888 թւականի օգոստոսին, Աղամեան վերադարձաւ իւր հալրենիքը իննամեաւ պանդխտութիւնից լետու, սրանդխտութիւն՝ որ առիթ տալով նրան կատարելագործել իւր արևսարը, փառքի ամենաբարձր աստիճաններին

հասցրել և դափնիներով զարդարել էր իւր ճակատը։ Լրագիրները համակրանքով ողջունեցին մեծ արևետագէտի վերադարձը, լուս լավոնելով որ շուտով հայ Համբէտը կարժանանան բնմի վերակ տեսնելու։

Կաղմեցաւ մի խումբ դերասանների և «Օթելլօ»-ով Աղամեան սկսեց իւր ներկացումները, Հայք և օտարապղիք խունած էին «Փրանսիական նոր թատրօն»-ի սրահում և հիանում էին Աղամեանի խաղով, կ. Պօլտում Օթելլօն հինգ անգամ կրկնւեց։ Կորրադօ, Ռւլիէլ Ակօստա, Քին, միմեանց լաջորդեցին ապշեցնելով հասարակութեան։ Յոյները համաձայնէցին Աղամեանի հետ Օթելլօ խաղալ խնդրելով որ ինքը իւր դերը համերէն արտասանէ, իսկ խումբը լունարէն։ Յոյների նման գոռող ազդի կողմից այս զիջորդութիւնը նշան է Աղամեանի բարձր հանճարին որի առաջ ամեն զլուխ խոնարհում էր կամակ ակամակ։

Աւելորդ չէ փիշել «Կորրադօ» ներկացման ժամանակ տեղի ունեցած մի դէպր։ Վերջին արարւածին, Կօրրադօի սարսափելի զոհաբերութեան ժամուն, երբ նա տառապում է օրհասականի տանջանքով, օր. Ազնիւ, որ կմմաի դերն էր խաղում (ասսը տարւակ դրամատիքական դերասանուհի) երբ տեսաւ Կօրրադօի ցաւերը, տեսաւ որ այդ մարզը որից առաջ վախում էր իսկ վերջերը համակրում, իրանից երկու քալլ հեռու անշնջանում է, վայրընկաւ ուշագնաց։ Վարագորը իջաւ։ Հատ կենդանի կերպով պատկերանում է աչքիս խեղճ Աղամեանի շիոթմունքը, Ոչ ոք ուշագրութիւն չէր դարձնում թատերասրանի կողմը, որ թնդում էր անվերջանալի ծափահարութիւններով։ Ամենքի ուշագրութիւնը օր. Ազնիւի վերակ էր։ Աղամեան ինքը գրկած անբարբառ դերասանունուն, բոլոր ձախով «բժիշկ բերէք» «օղը կօլօն» «ամէլը» գոչում էր։ Տասը վալրկեանից հաղիւ ուշքի եկաւ դերասա-

Նուհին՝ ուխտելով որ ազ ևս էմմափ դերը չի կատարէ։  
Նոյն թւականի դեկտ. 30-ին կատարւեց նոյն թատրոնում հոչակաւոր ողբերգութ 25 ամեակ բեմական գործունէութեան լօբելեանը։ Դա կ. Պօլսում կատարւող առաջին լօբելեանի հանդէսն էր։ Դարա համար կազմեցաւ առանձին մասնաժողով, որի անդամների անունը երաշխաւոր է թէ Աղամեանի տաղանդը ինչ աղլեցութիւն էր ունեցել իւր հարբենակիցների վերաց Ազդ անունները, փոքրաթիւ բացառութեամբ, ոչ թարրոնական գործի մէջ մտել էին, և ոչ էլ կը համաձանէին մտնել, բայց Աղամեանի տաղանդը, որով գերասանական արևստը անշափ բարձրացած էր, շատ հրաշքներ կարող էր գործել։ Յօբելեանի մասնաժողովի անդամներն էին պ. պ. Ներսէս Ներսէսեան, կ. Սվաճեան, Մինաս Զերադ, Միքայէլ Փորթուքալ, Ասպետ Զունդ, գ. Ապառուլահ, Թովմաս Թէքրիան, Մրապիօն Հեքիմեան, և Վասիլեան։ Հակառակ մի քանի բարեկամների խորհուրդների, Աղամեան շաապեց իւր լօբելեանի կատարումը, մէջոց չը առաջի որ գոնէ երկու ամիս տատարարւի, որով Կովկաս և Ռուսաստան, Աղամեանի հանձարին հիացող այդ երկիրները չը կարողացան պատշաճաւոր կերպավ մասնակցել լօբելեանին, որով անչափ պիտի աւելանար այդ հանդիսի շքեղութիւնը<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Աղամեանի յօբելեանին մի դէպք պատահեցաւ, որ Կովկաս վեցու և բարկութիւն պատճառաւեց։ Պատի ինդէբըն էր այդ։ Ըօբելեարին պատկ էր տրւած 170 զուրուշ արժողութեամբ (մոտ ¼ բարի) և այդ գումարը մոցըել էին ծախուրի բաժնում։ Եւ իսկապէս զայրանալու կամ վշտանարու առվիթ էր աս։ Բայց այդ անողները, կամ աւելի ճիշդ ը անողը (մնաք հաստատ զիտենք որ յօբելեանի մասնաժողովի անդամների եթէ ոչ բոլորը, գոնէ մէծ մասը անակընակ էին այս գէպիքն) ժամանակին մի փաքիքի վէճի պատճառու։ Աղամեանից նեղացած լինելով,

Յղան մարդիկ, որոնք նախանձից զրդւած, մի դերասանի լօբելեանի կատարւելու չը լուսած տօնախմբութեան վերաէ սկսան զարմանալ։ Ազդ մարդոց հասկացնելու համար օտարների մէջ Աղամեանի վակելած վառքը, հարկ եղաւ «քոսն և հինգ ամեալ բեմական գործունէութիւն Պ. Հ. Աղամեանի» անունով մի բրոշիւր հրատարակել (պ. Տօնապիտեան) որը բացի համառօտ կենսագրութիւնից պարունակում էր Ռուսաստանի նշանաւոր թէրթէրի Աղամեանի մասին գրածներից հատւածներ։ Բայց դորանով ոչ թէ չար լիդուները լրացին, ազ այդ բրոշիւրը մի տեսակ զէնք եղաւ նրանց ձեռքում, որովհետեւ սկսեցին միամիտներին հաւատացնել թէ «իրանք լւա գիտէին, որ Ռուսաստանի թէրթում Աղամեանի մասին ազգային բաներ գրւած չկա։ և թէ դրանք շնծու են»։ Նոյն իսկ իւր արւետակից ընկերներից շատերը հաւատացնում էին թէ «ինչ նրա բանն է Օթէլօ խաղալ...» ահա որ աստիճան նախանձը կուրացնում է մարդոց։

Աղամեան կ. Պօլսում, բեմի վերաէ երմալով, մամուլի մէջ մի նորութիւն ևս մացնելու առիթ տւաւ։ Մեր խօսքը մինչև այն ժամանակ համարեա կ. Պօլսեցոց անձանոթ մի շարք լուրջ քննադատաւթիւնների մասին է, որ Աղամեանի ներկայացումների մասին պարբերաբար հրատարակում էր։ Ազդ քննադատաւթիւններում քան տարի առաջ կրկնուղ աղուր կը խաղակ կոր»ից աւելի աջքի ընկնող կէտեր կար։

Հակառակ մեծ ջանքերի Աղամեան կ. Պօլսում

սորանով կամեցել էր իւր վրէժը լուծեւ։ Աղդարկ Աղամեանի նման մի դերասանից վրէժ լուծելու շատ սարը, անակնել և անպատճառ միջոց՝ որի արատը մըստեց մի անըող անմեղ հասարակութեան պատիւը։

Հը կարտղացաւ ներկալացնել «Համլէտ» և «Ախր Ալքար» ողբերգութիւնները. Որովհետև տեղական գրաքննութիւնը արգիլեց առարկելով այդ ողբերգութիւնների գործող անձնների մէջ թագաւորների գործութիւնը. և որովհետև Ստամբուլում մի թագաւոր կատ, հետեւաբար չէ կարելի թուլատրել երկրորդ թագաւորի գործութիւնը՝ թէկուզ այդ թագաւորը բեմի վերաէ լինի:

1889 թւականի գարնան Աղամեան տեղական երիտասարդութիւնից հրաւիրւեցաւ Զմիւնիա. հետզհետէ ներկալացրեց իւր զիմաւոր բէպէրտուարը ինչպէս և «Համլէտ» բացի «Ախր Ալքար»-ից: Հասարակութիւն բոլոր դասակարգերը եռանդուն ընդունելութիւն արեցին: Մանաւանդ իւր տեսակում միակն էր մանկական պարտէզի ծաղիկների մեծ արւեստագէտին արած ընդունելութիւնը: Նորա չորհակալութիւն բազմնեցին մի ուղերձով՝ որ այդ մեծ դերասանը կամեցաւ փոքրիկների ընկերակցութիւնը վաճելել Երգեցին, խաղացին, արտասանեցին և նրան մի ծաղկափունջ մատուցանելով անունը ստորագրել տեսցին այցելուների տեսրակում: Ես երբէք Աղամեանին անպէս զւարթ տրամադրութիւն մէջ չէի տեսելր ինչպէս Զմիւնիալի մանկական պարտէզում անցկացրած ժամերի միջոցին: Նա մանուկներին բաժնեց իւր պատկերներից և շաբարելին:

Իւր ի նպաստ տրւող «Համլէտ» ներկալացմանը ի միջի ալլոց պսակ տւեց հիւրանոցի ծառան, որ պաշտօնաթող մի Սերբ սպաէ էր:

Նորա կոկորդի հիւանդութիւն ունենալու լուրը թէկ Պօլսում եղած ժամանակ տարածւած էր<sup>1)</sup>, բայց ինքը

<sup>1)</sup> Աղամեանի կոկորդի հիւանդութիւնը առաջին անգամ յայտնել էր 1888 թ. ձմբան Մօսկվայում, բայց շուտով անց էր

շատ չնչին բան էր կարծում, որին չափազանց նշանակութիւն էին տալիս, բայց նա իւր այս կարծիքը ունենալով հանդերձ լրջօրէն հետեւում էր հիւանդութեան բժշկութեան: Նորան իւր այս կարծիքում աշխատում էին համոզել բոլոր բարեկամները: Կիմէ նա իմանար այդ հիւանդութեան չափազանց վտանգը, էլ այնուհետև նորա մտածմունքը նոյն իսկ կարող էր նրան գերեզման իցեցնել:

«Օթէլլօ» փորձելիս նա գանգատում էր իւր ձանկի թողութիւնից, և ասլա սկսում էր բնական կերպով գոռալ, ներկալացնելով Օթէլլօի այն տեսարանը երբ նա մահձից վեր թուած գալիս է Մօնթանօի և Կասսիօի մենամարտութիւնը ընդհատելու: Հակառակ նորա պնդելուն ես ոչինչ ձանձի ակարութիւն չէի նշարուում: Բայց երբ ներկալացրեց «Քին»-ը, որին նա աննման էր խաղում, երեսում էր որ նա բեմի վերաէ տանջւում է. ամեն բօպէ սպասում էր

կացել: Նոյնը կը կնւեց և. Պօլսում յաջորդ տարւայ գարնան երբ ինքը պիտի մասնակցէր բարեգործական նպատակով թերայում տրւող մի հանդէսի: Վաղօրոք արդէն յայտարարւած էր այդ հանդէսին Աղամեանի մասնակցութիւնը: Խոնւած ամեսութ սպասում էր նորա դուս գալուն, բայց ըլկար Աղամեան: Վերջապէս երեկեցաւ, ամեն ոք սրեց իւր լուկըքը:

«Հացցին մի անգամ Մեծն նապօւէնին, սկսեց խօսել Աղամեան տիկար հայնով, թէ ի՞նչ է պիտի կանանաւոր պատերազմ մղերու համար:

— «Երեք գլխաւոր բան, պատասխանեց նապօւէնի, առաջնորդամ, երկրորդ գրամ, երրորդ գրամ»:

«Այս ես հարցնում եմ Ձեզ, գիտէք ինչ է հարկաւոր դերասաննին իւր պաշտօնը խղճի մտօք կատարելու համար, նոյն պէս երեք բան, առաջին ձայն, երկրորդ ձայն, երրորդ ձայն»:

Վարագոյը ընկալաւ: Աղամեանի խօսքերին կետեւեց բուռն ծափակարութիւն:

— «Կեղծում է» ասում էին հանդիսականներից շատեր:

որ ձաւնը պիտի ընդհատուի: Նա համարեա չէր խաղում, ալ խօսում էր կամաց, բոլոր ուժը պահելով վերջին արարւածի խելագարութեան տեսարանին: Բայց զուր էր ամեն ջանք, հիւանդութիւնը կատարելապէս տիրում էր նրան, Փոխանակ մշակւած, ներդաշնակ ձաւնի լուռում էր խուլ հնչւներու Ալդ երեկովեան նման ձախորդ խաղ առաջին անգամ էի տեսնում որ Աղամեան խաղաց: Խջաւ վարագուրը Աղամեան լուսահատած դէն չպրտեց սուրը, որով սպառնում էր լորդ Մէնվիլլին, զլուխը սկսեց խիել պատերին և փետել մազերը: Նա ալ ես իւր անձի տէրը չէր: Աղամեան, ինչպէս և ամեն մի ճշմարիտ տաղանդաւոր զերասասն, քաջ զգում էր իւր խաղի բոլոր թուլութիւնը և անգաջողաւթիւնը: Երբ հանգարանցնելու համար մտակ իւր սենեակը, ընկաւ կրծքիտ վերակ լավիտ էր բարձրածան և կրկնում: «Եղբար Վ.րնիր, ինչ պիտի ընեմ ես... ինչ պիտի լինի իմ պատիւս, իմ անունս, իմ ապրուստս...»: «Դա ոչինչ բան է», ականց կենաչ, կը բժշկւիր և ալն, ալս սովորական բառերը անգան արտասանել էինք, որ բոլորովին կորցրին իրանց նշանակութիւնը: Նա հետղեաէ իմանում էր իւր հիւանդութեան բոլոր ծանրութիւնը:

Մինոն ձախորդութեամբ և բնական դրամակով վերջացաւ «Կօրրադո» դրաման: Նոն լացն ու սղբը, նոն սպանիչ լուսահատութիւնը: Նա զգում էր որ հիւանդութեան ժանիքը սեղմած իւր կոկորդին, քարշում է, ուղում է զլորել իրան փառքի ան բարձրութիւնից՝ որտեղ կանգնած է ինքը:

Աղամեանի գեղեցիկ խաղը իւր ընտիր բէպէրտուարում վերջին անգամ տեսնելը Զմիւնիավին վիճակած էր: Աղամեան վերջին անգամ արտասանում էր ալդ քաղաքում 0թելլօ, Քին, Կօրրադօ, և իւր նպաստ վերջին

ներկայացումը, վերջին Համլէտը: Նա հետզհեաէ հրաժեշտ էր տալիս ան անման ստեղծագործութիւններին, որոնց անքան զեղարւեասորէն և բնական կերպով պատկերացնում էր, և որոնք սպառեցին իւր անդին կեանքը:

Զմիւնիալից Աթէնքի լունաց լրագիրների թղթակիցները արդէն լուր էին հաղորդել թէ հռչակաւոր հայուղիքու Աղամեան ալցելելու է Աթէնք, որտեղից մոտակիր էր շարունակել իւր ճանապարհը դէպի Եւրոպակի մալրագաղաքները բայց հիւանդութեան ծանրութիւնը ստիպեց շուտով Կ. Պօլիս վերադառնալ:

Ոչ անքան որակ էր Աղամեան երբ շոգենաւ նոտեց: Լարծես զգում էր որ դէպի մահ է զիմում, գնում է իւր ծննդալարը երկու տարի էլ տանջելու և մեռնելու:

Կ. Պօլիս վերադառնալուց ինտէ խաղաց «Աէր առանց համարման» զրամակում: Ակն պիէսան, որ Տփիսիսում բացաւ նորան փառքի դոները, նոյն պիէսան փակեց նորա զերասանական փառաւոր դործունէութիւնը,

\*  
\* \*

Հիւանդութիւն և վերջին օրեր.—1889թ. լունիսին Աղամեան Կ. Պօլիս զառնալով, համարեա միշտ զբարւած էր կոկորդը տանջող հիւանդութեամբ. նորա ձայնը որ երբեմն կտրում էր և երբեմն բացում բոլորավին կտրւած էր: Խոկ նոյն թւականի ձմրան իւր ցաւերի վերա լողացաւ ևս աւելացաւ, անդէս որ նա անկողնում ստիպւած բոլորովին անշարժ պէսք է պառկէր, մի փաքիկ շարժում և կը տանջեկը աննկարապրելի ցաւերով: Թէ ինչ խստապահանջ և նեղսիրտ էր Աղամեան իւր

հիւանդութեան միջոցին, ասդ քաջ գիտեն նրանք, որ  
մօտիկ ծանօթ են եղած հանգուցեալ արևստագէտին,  
Մի չնչին սիսալ, մի ծուռ քաջ կամ մի աւելորդ բառ  
բաւական էր նրան վրզովելու, իւր ամենաթեթև տկա-  
րութեան ժամանակ պատահողն անգամ անկարելի էր որ  
չը լիշէր Մօլիկի օլիբեակալիկան հիւանդը», անմիջապէս  
բժիշկներով ինքն իրան կը շրջապատէր, և ղեղահատերի  
կամ ղեղափոշների ընդունելութեան ժամերը բովէնե-  
րով և վայրկեաններով էր գործադրում, Վերջի չօդացաւի  
մասին իրան հետ անձամբ խօսելիս նա ներկայացնելով  
իրանց տան Յակոբ անունով ծառան՝ մեծ չորրակալութիւն  
իրանց տան Յակոբ անունով ծառան՝ մեծ չորրակալութիւն  
հա- և երախտիք չախտեց իւր վերակ ունեցած խնամքի հա-  
մար<sup>1)</sup>: Դեռ 1890 թւականի գարնան, բացի իւր  
կտրած ձանից ոչինչ հիւանդութեան նշան չէր երեսում  
նորա վերայ: Դէմքը մի փոքր նիհարած էր, իսկ ծնուռ  
պատած մի փոքրիկ սիրու միրուքով, Վերջին տեսու-  
թեանս միջոցին գոչեց:

— Երանի քեզ, որ Տփիսիս ես գնում,

— Գնանք միստին, պ. Աղամեան:

— Ո՛չ, զու զնա. առաջիկաւ գարնան էլ ես ճանա-  
պարհ կընկնեմ:

Գարնան վերջանալուն հետ իւր արգասաւոր կեանքն  
էլ ցամքեցաւ, իւր սրտակից Աղէք. Ստեփանեանցի գրած  
նամակներում շարտնակ լիշում է բժշկելու համար գար-  
նան իտալիա գնալու մտադրութիւնը: Զը նաէլով հիւան-

1) Աղամեան առկասարակ առանձին սէր ցոյց կուտար  
դէպէ իւր ծառանները: Նա գովելով նոցա կը ներկայացնէր եւը  
բարեկամներին: Յակոբի Նման գովելսով կը խօսէր իւր շուշեցի  
Պօղոս ծառայի և Ղաղար Մամուկեանի մասին: Վերջինս որ  
Մողդոքից վերցը 1886 թ. շարունակ երկու տարի մօտն էր:

դութեան ձնշման տակ օրից օր տկարանալուն՝ նա մինչե  
վերջ պահեց իւր բժշկւելու լուսը, նա զարհուրում, զողում  
էր մահից: Սովորական խօսակցութիւնների մէջ նա չաճախ  
խօսում էր իւր ծերութեան մասին, օրի սանդուղքների  
վերաէ շուտամի սաք էր զնելու:

— Ես չը պիտի լինեմ այն ծերունիներից, որոնք  
իրանց դէմքի վերաէ և առօրինակ կեանքում ցոյց են տա-  
լիս որ ընկածում են տարբիների բեռան տակ. ևս պիտի  
լինեմ առողի, կատառ և աշխատ:

Այս խօսքերը ասելուց չետոյ իբր կենդանի օրինակ  
աշխատ ծերութեան ցոյց էր տալիս փողոցից անցնող մի  
առողի և կատառ ծերունի: Շատ անդամ էլ մատիսով  
նկարում էր թէ ինքը ծերութեան ժամանակ ինչ դէմքի  
փոփոխութիւն պիտի կրէ:

Բայց զգաց որ տան մէջ իւր բժշկութիւնը, եթէ ոչ  
անկարելի, գոնէ դժւար է, Յօնֆօրի վերին մասում,  
Պէօլիւք-դէրէում, ուր երկու ժամումն է գնում շոգենաւը,  
մեծ դժւարութիւն է բժիշկների երթևեկութիւնը, ուստի  
լսելով բարեկամների խորհուրդին՝ որոշեց զնալ հիւանդա-  
նոց, և իբր իրան ծանօթ ազգութեան ընտրեց սուսաց  
հիւանդանոցը, որի զիսաւոր կառավարիչները, ծանօթ  
մեծ արեստագէտի իրանց հայրենիքում վաելած փառ-  
քին ու համբաւին՝ առանձին ուշադրութիւն դարձրին  
նորա վերայ:

Որպէս զի Աղամեանի վիճակի վերաէ աւելի մօտիկ  
տեղեկանք, աւելորդ չէ մէջ բերել նորա երկու նամակ-  
ները, մէկը ամբողջապէս, իսկ միւսի մի մասը՝ որ վերա-  
բերում է իւր հիւանդութեան վիճակին: Ալդ նամակները  
ուղղւած են Տփիսիսի միակ բարեկամին, որին հանդու-  
ցեալը իւր «Հօրացիօն» էր կոչում, և որը բարեսիրաբար  
լանձնեց մեզ հրատարակութեան:

«19 լուսար. 1891թ. Կ. Պ. Պէօնիք. աէբէ.

Պատւական և սիրելիդ իմ Սահղը».

«Ներէ ինձ, որ աւսքան ուշ բարեմազթում եմ քեզ Նոր-Տարին, բայց բաւական է որ 'ի սրտէ կը ցանկամ քեզ համար լաւագոն և բարեպաստիկ օրեր, ուրեմն փոքր ինչ ուշանալը չի վնասեր. արդէն դա մի սովորութիւն են արած մարդիկ միմեանց բարեմազթութիւններ անել նոր տարւակ առթիւ և ազդ բարեմազթութեանց մէջ աւելի լեզուներն են խօսում քան սրտերը: Ինձ որ մնալ ոչ միան կը ցանկամ քեզ համար ամեն նոր տարին բարեպաստիկ, այլ մինչև անգամ կենացդ ամեն նոր օրերը, քերելով քեզ նոր ուրախութիւն և նոր չաջողութիւններ, բայց պիտի ասես թէ զժբաղդաբար աճնպէս չէ լինում, սական փութ չէ, դու քո վշտաց մէջ հաւատան, աւելի սիրելի ես Աստուծու քան շատեր իրանց լուրիների դէզին մէջ: Մի մոռնար Քրիստոսի ասածը. «ամբարշտաց չաջողեսցի ի վերաց երկրի»: Մի մեծ իտալացի բանաստեղծ փիլիսոփակ Տանգէ Ա. Լիկիէ ու ի ասում է թէ «Հաղար հաճուք մի վիշտ չեն արժէ ը» քիչ շատ համբերութեամբ տարւած վիշտը մեզ Աստուծու է մօտեցնում: Նորա որ մեծ վշտեր ունին, երջանիկ են մի փոքր ուրախութեամբ էլ Աստուծած աւելի որոշ կը տեսնէ նրանց՝ որոնք որ անտես են թողւած մարդկներից, սական ովկիանոսի մէջ մարդարիսը, ժագաերի ծոցին մէջ թաղւած ազամանղը ծածկւած են թէպէտ մարդերից, բայց որոշ կը փալին սակեզծողին աչացն լանդիման: Ինչպէս դու, իմ թանկապին հերոսս, որ ծածկւած ես աղքասութեանդ քողին տակ, բայց իշէ որ կայ մի աշք քեզ անենող և ազդ աչքից պիտի ծաղէ մի օր հոգուդ լուս և միսիթարութիւն և այս իմ ասածները փորձով գիտեմ: Դու ուրախացիր որ ունիս հոգւով և սրտի հարըստութիւն

և ցաւէ նոցա վերակ որք աղքատ են այն կողմից, զի ալդ է ձշմարիտ աղքատութիւնը»:

«Ինչպէս որ երեսում է կոխի գրութիւնը անկաջող են զանում բժիշկները և զեռ չեն համարձակում բացարձակ կերպով ներարկել հիւանդներին, որովհետեւ փոխանակ բժշկելու կամ սպանում է և կամ մի նոր տարօրինակ հիւանդութիւն է լաւաջ բերում: Ուստի իմ բժիշկն էլ չէ ուզում իմ վրայ փորձել, դորա փոխարէն տալիս է մի գեղ, որից ընդունում եմ օրը և չափ զդալ, մեծ նեղութեամբ և որի մէջ քրէ օզօթ կաէ, և որ սաստիկ այրում է կոկորդս և բերանս: Սական ինչպէս երեսում է սորանից օգուտ պիտի տեսնեմ, որովհետեւ վէրքը փոքր ինչ մեղմացած է թւում: Սական սաստիկ ձմեռն ու ցուրաը որ տիրում են աւտեղ՝ զանդաղեցնում է իմ բժշկութիւնը, Երեսակալէ, ես որ սիրում էի նստել, խօսել բարեկամացս ընկերութեան մէջ, աչժմ ոչ ընկերութիւն ունիմ մօտս, և ոչ ձան. թէ լեզոս միան շարժել կամենամ՝ սաստիկ ցաւ կզգամ, վերջապէս կիանքս անցնում է առանձինն, տխուր, միօրինակ, անձան և անդրամ...

«Մեծ է լուս և հաւատք: Աստուծած, որով կարողանում եմ զիմանալ իմ այս ցաւալի վիճակին, և լուսալ որ մի օր պիտի կարողանամ զրկել և համբուրել զքեղ կրկին»:

«22 փետրար, 1891թ. Կ. Պ. Բերա, Նշան-թաշ.

«Հիմակ, որ զտնում եմ ուռաց սուրբ Նիկողայոսին հիւանդանոցում, շատ աւելի լաւ եմ զգում ինձ: Օրը երեք անգամ ընդունում եմ բժիշկների ացելութիւնը, մանաւանդ բուն իմ մասնագէտ բժիշկս, Միխայիլ Օսիպովիչ Պէսոկով, լիովին լուս է տալիս բժշկել ինձ. արդէն ամեն-

օրեալ կատարած վիրաբուժական գործողութիւններից մեղմացել է կոկորդիս ցաւը, փառք Աստուծոն...

«Սրաիդ խոռվութիւնը թող ազ ևս հանդարտի, կարծեմ որ պիտի կարողանամ կրկին տեսնել, զրկել դքեզ»:

Զը նաև իւր արակարդ համբերութեան, որով նա ընդունում էր իւր վերաէ կատարած անտանելի վիրաբուժական<sup>1)</sup> գործողութիւնները և տրւած դեղերը, հիւնդութիւնը հետդինեաէ սասականում էր: Բաւական չէր կոկորդի տանջանքը, թոքախան էլ միւս կոզմից աւերում էր նորա մարմինը: Տեսնելով նորա հիւնդութեան ծանր կերպարանք ստանալը ապրիլի կէսին փոխազեցին նրան կրկին Պէօլիս-դէրէ: Աւդտեղից Աղամեան իւր վերջին երկու նամակները զրկեց ՚ի Կովկաս, մէկը իւր բարեկամին, միւսը «Մշակ»-ում տպելու՝ չնորհակալութեան համար. այս մասին իւր բարեկամին գրում է թէ այդ նամակը հազիւ կարողացել է երեք օրում գրել:

Թէև օրից օր տկարանում և մօտենում էր գերեզմանին, բայց նա մինչև վերջին լուսին լսանի ոչինչ չասաց իւր մահան մասին: «Ես օդափոխութեան պիտի գնափի, ասում էր հիւնդը մահանից մի քանի օր առաջ, մինչեռ սենեակէս դուրս չեմ կարող ելլել... քորիկի, եթէ ոռուսիու բարեկամներս զիտենան թէ ևս օդափոխութեան կը փափաքիմ, վարկեան մը զիս հոս չեն ձգեր»:

Պէշիկթաշլեան գրում էր իւր մահան անկողնից թէ «Երկար տեսեց այս ողբերգութիւնը, արդեօք Երբ պիտի իջնէ վերջին վարագուրը»: Բայց Աղամեան որքան էլ մտածէր, աշխատում էր այդ մտածութիւնը վանել իւր ուղե

1) Վերաբուժական գործողութիւնները կատարուում էին Սոգամանի կոկորդում զտու եկած ուսուցները դադելու կամ կարելով ոչնչացնելու համար, որ մի կողմից Կովկասի գոյանում

դից. Նա իբրև մահից զարհուրող մարդ՝ չը համարձակեցաւ իւր մտածութիւնը զրի առնել, կամ մինչև իսկ իւր մահան կարելիութեան մասին երկու խօսք ասել: Գիռհիւնդութիւնից մի քանի օր առաջ թախանձելով հարցնում էր իւր բժշկին թէ պիտի կարողանալ բժշկել: Աղաման, որ ինքն իրան համարեա բժիշկներին էր լանձնած և լոիկ կատարում էր նոյսա անտանելի հրամանները, և որոնց վերաէ նա անչափ հաւատաք ունէր, վերջերս բոլորվին մերժել էր այդ սարսափելի գործողութիւնները, որոնք առ ոչինչ համարելով կրկնակի հիւնդութիւններով տառապող թշտառ հիւնդի վիճակը, ուզում էին իրանց փորձերը շարունակել նորա դիակի վերաէ անդամ:

Թէև լունիսի 2-ն էր, մահան նախորդ օրը բայց Աղամեանի ապրելու բոսը դեռ վառ էր:

—Տիւրիւկա քորիկի<sup>1)</sup>: մի վախճար, ասում էր հիւնդը հազիւ լսելի ձանով իւր լուսահատ քրոջը, ևս քեզի համար աղէկ պիտի ըլլամ... քնանալ կուզեմ...

—Մի նեղիր, քնացիր:

—Քնանալ... երբէք, երբէք... դու քովս նստիր, եթէ քնանամ հեռացիր:

Աղամեան իւր պառկած տեղում շատ լաճախ արտասանում էր Համէտ, Օթելլո և Լիլ ողբերգութիւններից. թոշում, սլանում էր հոգւով զէպի թատերաբեմ, հազնուում և երեսում էր իրան անհամբեր սպասող հասարակութեան, ընդունում էր նոյս պատկերը, և իւր երեւովթը ողջանուում էր որոտացող ծափահարութեամբ:

Աղամեան իւր մահճի մէջ առաւել զգաց թէ որ քան մարդիկ կան կովկասում և Ռուսաստանում իւր վե-

2) Վերջին ժամերում Աղամեանի խօսքելը գուքս բերւած են իւր քեռայր պ. Թաշճեանի նամակեց:

բաէ մտածող և որքան սրտել թռթռում են իրա համարունակ կարելի եղած չնորհակալութիւնը լաւնեց իւր կըրկնակի նամակներով, և իւր մօտիկ բարեկամների անունները շարունակ լսւում էին իւր բերանից:

Զարաբաստիկ օրեր էին լրսանում Ազամեանի սրտակիցների և գնահատողների համար. մեծ դերասանը չափազանց զբաղւած էր մտքով և քոյրը նկատելով նորա ավտ մտածողաթիւնը հարցրեց.

—Ի՞նչ կաէ որ աղջափ կը խորհիս:

—Ոչինչ, եթէ գիտենաս Տիւրիւկա թէ ինչ կը խորհիմ, գոչ չես ըլլար:

Նա իւր մահւան կարելիութեան մասին էր խորհում. Վերջին օրւաց վերջին ժամերն էին, Մովսէս գերապահառ կը կարդար իւր աղօթքները, բայց հիւանդը հաղիւ կը լսէր դրանց, նա մտքով սլանում էր, հոգւով փոխադրում էր մի ալ աշխարհ. «ան անքննելի աշխարհը, որտեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձելու»: Նա հանգստացրոց խոռված գերապահառովն և դրկեց, բռնեց իւր հօրեղբօրդողու ձեռքը, նաև եց նրան հանգած աչքերով, ուզում էր խօսել, բայց լսւեցաւ միան խուզու հաղազներ և... մեռած էր:

#### ¶.

Աղամեանի հայեացքը դերաստնական արւեստի մասին.—Նորա գլխաւոր գերերը.—Ի՞նչ արեց Աղամեան հայ բեմի համար.—Աղամեան իրը բանաստեղծ և նկարիչ.—Ի՞նչ էր սիրում Աղամեան, —Մեր մահնաւոր կարծիքը նորա մասին ընդհանրապէս:

Աղամեանի հայեացքը դերաստնական արւեստի մասին՝ ալ արդէն վիշած ենք գրւածքի նախորդ մասում, հետևաբար աւելորդ է կրկնելը: Հետևաբար առիթ ունենք մտածելու թէ որքան տաղանդուր գերասաններ լառաջ են եկել զեռ առաջին քալլում՝ որ կարողացել են իրանց խաղով միանգամից հասարակութիւնը սերտ կապել թատրոնի հետ: Ալդ միջոցներումն էր որ մի սիրունիկ տղալ, թողած ամեն ինչ, թափառում:

Քաջալեր և խրախուսող: Բնութիւնը տալիս էր իւր տուրքը, արտադրում էր, բայց ըսկար մի հաստատութիւն կամ հիմնարկութիւն որ արտադրւածը պահպանէր և հոգ տանէր նորա զարդացմանը:

Սուլթան Ապդ-իւլ-Մէջիդի օրով, երբ շոգենաւերը լողալով աւելի մօտեցրին հեռու Արևելքը Եւրոպակին, սկսան Եւրոպական զանաղան ազգերի հոսանքներ հեղեղ զել առլթանների մաքրաքաղաքը, որոնց բարաբերութիւնները աւելի սերտացան, երբ Խրիմի պատերազմի առթիւ Եւրոպական բանակներ կ. Պոլիս մտան չօգնութիւն Սուլթանին: Ալդ միջոցներն էր որ կ. Պոլսում եկան և սկսան իրանց ներկալացումները Եւրոպական, մասնաւորապէս խաւական խմբեր: Ահա սոքա էին որ առաջին անգամ իրանց խաղով ազգեցին կ. Պոլսեցի մի խումբ հաւ երիտասարդների վերաէ և նոցա մէջ միտք ըլացրին ազգափնթատրոն հիմնելու, որին կնքել են «Արևելեան թատրոն» անունով 50-ական թւականներին: Մեր աւ փոքրիկ լառաջարանի նպատակն է, ցոյց տալ ընթերցողին թէ ախ. պիսի մի ինքնարտու հիմնարկութիւնից չէր կարելի շատրան պահանջել: Անդրանիկ հաւ զերասան և դերասանու հիներ երեցան բեմում, որոնցից շատերը, ականատեսների վկացութեամբ, իրանց բևմական տաղանդով զարմացրին նուն խակ Եւրոպացիներին: Խակ թէ հասարակութեան առաջնորդը՝ մամուլը, ինչ հակեացը ունէր թատրոնական արւեստի մասին՝ ալդ արդէն վիշած ենք գրւածքի նախորդ մասում, հետևաբար աւելորդ է կրկնելը: Հետևաբար առիթ ունենք մտածելու թէ որքան տաղանդուր գերասաններ լառաջ են եկել զեռ առաջին քալլում՝ որ կարողացել են իրանց խաղով միանգամից հասարակութիւնը սերտ կապել թատրոնի հետ: Ալդ միջոցներումն էր որ մի սիրունիկ տղալ, թողած ամեն ինչ, թափառում:

Էր թատերաբնմերի վերակ, դերասանների խմբերում և նոցա տներում: Դա Աղամեանն էր, նա իւր բոլոր ուշադրութեամբ հետեւում էր մեծ զերասանների խաղերին, թէ նոքա ինչպէս էին խօսում, բարկանում, տանջւում և մեռնում: Նա էլ սկսաւ հետևել կինդամի օրինակներին, թէ առանձին և թէ խաղալով, դնելով իւր գերերում աւելի կորով, զգացմունք և միացնելով դրանց՝ ներդաշնակ ձանը: Սորանցով արդէն նա բաւական զանազանում էր իւր ընկերակիցներից: Այսպէս նա մարդում էր զրամաներում, գլխաւորաբար սիրահարի գերեր կատարելով: Ինչպէս աճ ժամանակւադ բոլոր բեմերում, նոյնպէս և հայկականի վերակ, աիրապետում էր և զան ակով խօսելը, որ մեր մէջ մտած էր մասնաւորապէս խտալացիներից: ամբողջ խումբը վարակւած էր այդ հիւանդութիւնով, ով աւելի լաւ եղանակէր, (մանաւանդ աղաւակին անւանւած պատմական պիէսներում), նա էր ամենալաջող գերասանը: Աղամեան քիչ ունէր այս թերութիւնից՝ իւրեք աւելի ուշ բեմ դուրս եկող դերասան:

Այցելելով Տիփիւս և ապա Ռուսաստան, շիւելով ռուսական լաւ գերասանների հետ, նա մօտիկ ծանօթացաւ բեմի ալֆմեան բէալական ուղղութեան, դրան պակաս չէին օգնում և թատրոնական ընտիր քննադատութիւնների բացց ինչպէս հին ուղղութիւնը անտանելի էր իւր եղանակով, պակաս անտանելի չէր և բէալականութեան երկրպագուների ուղղութիւնը, որին զոհաբերում էին թատրոնական արևոտի բոլոր գեղագիտական մասը: Ահաւասիկ այս կէտի վերակ ամենաճն իրաւամբ Աղամեան զարանում էր: Շատ անգամ խաղի բնականութիւնը պահանջում է որ մի ամբողջ խօսակցութիւնը կամ մենախօսութիւնը կատարէի աճնպէս՝ որ գերասանի կոնակը միան տեսնէ հասարակութիւնը: Դե-

րասանի խաղից ինչ հաճողք կարող է ստանալ հանդիսականը՝ երբ նորա դէմքի արտաչափութիւնը իրան անտեսանելի մնաց: Այսպիսի դէպքերում բնականութիւնը միշտ պէտք է զոհւի գեղարւեստին, և ամենաթունդ բէալիստ զերասանն անգամ չը պէտք է վրոգվէի ալոյն զոհաբերութիւնից: Այս մասին կարելի էր գեռ շատ օրինակներ քերել, բացց կարծում ենք որ ազգանով մեր միտքը հասկացրինք: Աղամեան, (ինչպէս նաև Ֆրանսիակի՝ չափնի կատակերգակ կօքըլէն, և ուրիշներ) պաշտպանում էր այն միտքը թէ բնականութեան պատճառով երբէք պէտք չէ ոտնակոխ անել գեղարւեստական մասը: Բնականութիւնը պէտք ներդաշնակ կերպով բեմի վերակ միանալ գեղարւեստական նրբութեան հետ, ալլապէս թատրոնը չի հասնիլ իւր գլխաւոր նպատակին, աճն է՝ ուղղել, մեղմացնել բարքերը՝ գեղարւեստորէն ներկալացնելով ճիշտ տիպեր: Տիպերը ճիշտ ներկալացնելիս, առանձին ուշադրութիւն զարձնելով գեղարւեստական մասին, երբէք բնականութեան դէմ գործած չենք լինիլ, ընդհակառակը, բնական տիպը եթէ ունի իւր մէջ թերութիւններ, շատ չաճախ կը պատապարէի գեղարւեստի վերարկուի տակ: Մենք բոլորս կինդանի վկաներ ենք թէ Աղամեան որքան բնական էր խաղում իւր գերերը, մինոն ժամանակ մացրած էր իւր դերերում և գեղարւեստը, էստէտիկան: Շատ ճշութեամբ նկատած էր „Օծու. Տելեգրաֆ“-ի չողւածագիրը թէ Աղամեան երեք քառորդովն ըկալիստ և մի քառորդովն միան կլասիկ է»: Ամիովինք արւեստի մասին Աղամեանի քարոզածը:

Ա. Առանձին խնամքով և բնականութեամբ պատրաստել զերերը, մինոն խնամքով միացնելով նորան գեղագիտական մասը:

Ճաշակի նրբանալու և զարգանալու պատճառով հա-

սարակութեան մէջ աւելի և աւելի պահանջ է զգացում  
դէպի կատարելագործեալ գեղարւեստը։ Խոհարարը որ  
միան կերակուր եվելու պաշտօն ունի, որ շատ դրական  
գործ է, խոհարարը, ասում ենք, ոչ միան ջանք է գործ  
դնում իւր կերակրի ներքին արժանաւորութեան, քմաց  
պատճառելիք հաճուքին, այլ և աշխատում է կարելի  
եղած գեղարւեստական ձեր տալ նորա արտաքինին, ու-  
ղում է կշտացնել՝ միենոն ժամանակ հաճուք պատճառե-  
լով մեր աչքերին։ Ուրեմն մի խոհարար, որի կոչումը  
լոկ փոք կշտացնել է, նա որ աշխատում է գոհացում  
տալ մեր գեղագիտական ճաշակին, որքան առաել մեծ է  
գերասանի պաշտօնը, որի կատարելիք գործը լոկ գե-  
ղարւեստական է։

Բ. Հայ լեզւի առողանութեան խնդիրը։ Սա ևս գե-  
րասանական արւեստի գեղագիտական մասի հետ իրը  
ուղղակի առնչութիւն ունեցող խնդիր, մեծ կարևորու-  
թիւն ունի, և հանգուցեալ արւեստագէտը յաճախ ցատկ  
էր լիշում այս մասին իւր ընկերների ունեցած անտարբե-  
րութիւնը, ոմանք անփոթ էին, ոմանք անկար, ոմանք  
էլ թէ մէկն էին և թէ միւսը։

Հայ լեզւի բառերի կազմութիւնից և շեշտեր չ'ու-  
նենալուց շատ դժւար է նորան բեմի վերաէ արտասանել՝  
տալով նորան այն կատարելութիւնը՝ որ պահանջում է  
թէ ներկայացնելի դերը և թէ ճաշակը։ Արտասանութեան  
մէջ զիխաւոր տեղ է բունում նաև բառերի գատաւորու-  
թիւնը։ Շատ անգամ, իրանց մէջ կոկորդաւին բազմաթիւ  
տառեր պարունակող բառեր չարւելով միմիանց մօտ,  
գերասանին եթէ անկարելի չեն զարձնում դոնէ դժւա-  
րացնում են արտասանութիւնը և կրքերի արտաքատու-  
թիւնը։ Այդ պարագալում հեղինակը, կամ թարգմանիչը  
եթէ անփոթ է եղել, գերասանը ինքը պիտի լրացնէ աց-

պակասը՝ լանուն գեղարւեստի։ Ազպէս էլ անում էր  
Աղամեան։ Բացի դորանից, նա բառերը անպիսի դե-  
ղեցիկ կերպով շեշտում էր, որ հայ լեզուն կրկնակի գե-  
ղեցկանում էր ոչ միան հակերի, ալ նոյն խոկ օտարների  
լսելիքին։ Աղամեանի քննադատները այս տեսակէտից  
անչափ չառաջ գնացին, որ մինչև անգամ ասեցին։ «Ան  
լեզուն որով նա խաղում է, թէն հակերէն է, բայց ոչ  
երբէք կոկորդավին, այլ բաւական քաղցրահնչիւն, հեշտա-  
լուր և ալլափոխած լեզու է, կարծես անզիլական և  
խտական լեզուների մի խառնուրդ լինի։ Մեզ ծանօթ  
հակերէնը՝ Աղամեանի բերնում այն է ինչ որ է հրէական  
լեզուն գերմաներէնի մօտ։ իսկ առողանութիւնը աւելի  
ընտիր է։ Անպէս որ մի մարդ եթէ լսալերէն և հակերէն  
չը դիտենալ, միենոն է թէ 0թէլլօն լսէ հակերէն կամ  
խտակերէն։ իսկ գերադասումը՝ ճաշակի խնդիր է»։ Ահա  
թէ ինչ է նշանակում գեղեցիկ և մշակւած առողանու-  
թիւն։ Բացարձակ կարող ենք ասել, որ հայ լեզւի ան-  
տեղեակ ոչ մի քննադատը, որքան էլ լաւ գերասանի  
խաղ տեսնէր, չէր համարձակիլ ալսպէս խօսել հայ լեզւի  
մասին, եթէ չը լսէր անքան գեղեցիկ և աղջու առողա-  
նութիւն՝ որպիսին ունէր Աղամեան։ Բայց մենք հաւա-  
տացած ենք որ Աղամեան շատ չէր մտածում իւր արտա-  
սանելիքի մասին։ Նորա տաղանդը և զարգացած ճաշակը  
խկոնց թելազորում էին նրան թէ ինչպէս պէտք է ար-  
տասանել։

Նոյն զեղագիտական տեսակէտից հետեւում էր նա  
իւր բեմական հանգերձանքին և զլխաւորաբար զրիմին։  
Ոչ մի գերասան դեռ չէ ունեցել նորա գեղարւեստական,  
Ճիշդ, և ալլափոխած զրիմը։

Իոկ եթէ նա առհատարակ հետեւում էր էֆֆէկտի,  
Ճիշդ է։ բայց նորա գործադրած էֆֆէկտները ոչ թէ աչքի

էին ընկնում իրրե անբնականութիւններ, այլ ընդհաւակառակը, խաղի բնականութեան սահմանից դուրս չը դաշտով, գեղեցիկութիւն էլ էին պատճառում: Վերջերս նրանում երբէք մի անաեղի էֆֆէկտ չէ երեացել:

\* \* \*

Նորա գլխաւոր դերերը: — Աղամեանի զլիսաւոր գերերի վերապ մենք մի ընդհանուր հայեացը միայն կը ձգենք. աւելի հետաքրքրուղներին թողնելով որ կարդան նորա մասին գրւած բազմաթիւ քննակատութիւնները:

Խօսելով թէ Աղամեան ինչ աչքով էր նաևոմ գերասանական արւեստի վերակ, մենք մասամբ ասած եղանք թէ ինչ ոգով պատրաստում էր իւր դերերը: Դերերը պատրաստելիս անշափի օգնում էր իրան իւր արաւակարդ վիշողութիւնը. բաւական էր որ նա մի անդամ կարդար կամ լսէր, արդէն ըմբռնած էր և մի վարժ լուշարարով պատրաստ խաղալու. իւր դերը սովորելոց վետոյ մնացեալ ժամանակը նա նւիրում էր ուսումնասիրութեան: Վերջերս պատրաստած իւր գեղեցիկ բէպէրառուարի մասին ինչ նոր գրւածք որ լուս էր տիմում (զլիսաւորաբար Շէքսպիրի մասին), նա խսկոն ձեռք էր բերում կարդում և ապա իւր կարծիքը լատոնում: Նա հաւասար լաջողութեամբ խաղում էր Համլէտ, Օթէլլօ, Կոռլադօ, Քին, Ուրիէլ Ակոստա և Արբենին: 1887 թ. Աղամեան երբ պատրաստում էր խաղալ «Լիր Արքան», լսողները տարակուառում էին, որովհետև ալս դերը բոլորովին տարբերում էր վերացիշեալներից. բայց Աղամեանի հանճարը լաղթող էր, նա նունքան գեղեցիկ և կատարեալ լիր էր որքան կօրրադո:

Աղամեանի դերերի պատկը Համլէտն էր: Աւ ոչ մի

գերասանի լաջողած էր անքան ձշմարիտ և գեղարւեսական Համլէտ ներկազացնել՝ որպէս Աղամեան: Թէպէտմեզանում գովուում էր Աղամեան, բայց հայ մամուլը երբէք չ'ասաց նորա մասին այն ինչ որ ասեցին Ուսասատանի թերթերը: Ալսպէս, , Մոսկովսկի Ենթօմոսի “իքնաղատը խոսավանում է որ «ոչ Ուսսոսի, և «չ էլ հոչակաւոր Սալւինին հաւասարուում են Աղամեանին՝ Համլէտի դերում»: Իսկ Պէկստեօն «հանդէսը զրում էր: «Հայ դերասան պ. Աղամեան, առաջին անգամ բեմ զուրս գալով Համլէտի դերում, վիովին արդարացրեց այն զովասահական չափարարութիւն: Ներն, որ հարատարակուում էին Սովորի լրագրիներում... Առանց ընդօրինակելու, առանց նմանելու Համլէտի հոչակաւոր կատարողներին, նա ստեղծել է վիովին արւեստագիտական մի տիպ՝ ամենամարդամասն կերպով ուսումնակրւեած հասիրւած և կոկւած հրաշալի նրբութեամբ: Ներկայացման աջ ինքնազիւտ սեպհականութիւնը նրանումն է: Կապանում, որ Աղամեան Համլէտի խօսքերում և զործողութիւններում մտցրած է շատ աւելի կիրք և կորովքան Ուսսոսի և աշխարհաճռչակ Սալւինի...»:

«Առաջին անգամն է որ սուսաց բեմում մի աշպիսի բան ենք տեսնում: վաստ չէր լինի, եթէ մեր «արքունի» գերասանները հետեւէին և բան սովորէին իրանց: Հայ արւեստակցից, որ ինչպէս կարծում ենք, թէի վկանական չունէ, բայց ունէ արւեստագիտութեան նուրբ ճաշակ և դերասանական բարձր տաղանդ...»:

Աղամեանի Համլէտի մասին երկար քննաղատական լողւածներ նւիրած է „Խօօօսի“ թերթում լատոնի ոուս գրագէս Զուկօ, որոնց մէջ մեծ գովեստով է խօսուում Աղամեանի դերակատարութեան մասին:

Օդեսան, որ տեսած է բոլոր թատրոննական հսկաները,

Ա թատերական զարգացած ճաշակի տեսակէտից մեծ համբաւ է վակելում, Աղամեանին դովաբանելու համար մարտաքաղաքի թերթերից մի քաղ էլ լառաջ գնաց: „Օճեռք. Ենտիք“ զրում է.

«Զափաղանց լափչտակւած ենք Աղամեանի նշանաւոր խաղով և գեռ սթափւած չենք նորա ձանի դիւթական հնչիւններից: Կատարեալ համարձակութեամբ կարելի է ասել թէ Համլէտի դերում Աղամեանի լառաջաղիմութիւնը գերազանցեց ամեն ակնկալութիւն: Ո՛չ Սաւինի, ոչ Բոսարտ, ոչ Պառնակ, և վերջապէս ոչ աշխարհական չափ գերասան տւել է մեզ այնպիսի անխարդախ և կատարելատիպ Համլէտ՝ որը տւեց մեզ պ. Աղամեան:

Օթէլլօն՝ Աղամեանի վերջին տարիներում տառածնասիրած դերերից մինն էր: Երբ Տփխիսում Օթէլլօի լաւտարաբութիւնները կպցւած էին, բարեմիտ մարդկան նորից շնչում էին հասարակութեան ականջին թէ՝ «Օթէլլօ խաղալը նորա բանը չէ»: Ներկալացումը լաջողութեամբ վերջացաւ, և ծշմարիտ տաղանդը ամեն քսութիւն լուեցրեց: Ինչպէս Համլէտի, նոյնպէս և Օթէլլօ-Աղամեանի մասին Տփխիսի թերթերը այն չը գրեցին, ինչ որ գրեցին Ուռասաստանի մեծ քաղաքների աւելի զարգացած հասարակութեան մամուլը: Սակայն հանձարն էր որ լաղթեց բնութեան թերթիւններին և ներկալացաւ մեր աչքին իրեն կատարեալ, անվեներ, քաջ և որոտացող դիւցազն: Չը նակելով իւր նուրբ և դաշն ձանին, որ անհամապատասխան էր պատերազմող մաւրիտանացու նշպիտ տիպին, նա այնպիսի ալլագոխւած, հուժկու և առողջ էր, որ մարդ դժւարանում էր հաւատալ թէ Օթէլլօ ներկալացնողը նոյն Համլէտ—Աղամեանն էր: Բայց Աղամեան հրաշք էր գործում զլխաւորաբար Օթէլլօի այն տեսարաններում ուր

խօսքից աւելի սիրուն է խօսում, և սրաի խօսածը արտաքաւում է դէմքի և մարմնոյ զանազան նուրբ, հոգեբանական շարժումներով. օր. գ. արարւածը, երբ նազոսկում է նախանձու թունը թափել քաջ մաւրիտանացու հոգում:

Չը նակելով իւր մի զլխաւոր, հասակի և կաղմածքի բնական թերթիւնն (Աղամեան կարծ-միջահասակ էր և ունէր շատ նուրբ կազմւածք), այնու ամենանին նա իւր մարմնը այնպէս լարդաբում էր, որ հանդիսականի աչքին երեսում էր կատարելապէս նեքսպիրի նկարագրած հերոս-պատերազմողը: Նա մեծ ճաշակով և խնամքով բարձրացնում էր իւր հասակը, և կատառութիւն էր տալիս իւր կաղմածքին: Երեսում էր Օթէլլօն առողջ, ցցւած կրծքով, ջղոտ բազուկներով և ամուր սրունքներով: Աղամեան իրեն Օթէլլօ իւր արտաքինով ոչ մի թերթիւն չունէր:

Անա թէ ինչ է զրում „Օճեռք. Ենտիք“-ի լողածագիրը Աղամեանի Օթէլլօի մասին:

«Ոթէլլօ է խոստովանել թէ, նուեմբերի Յ.ին թատրոն գնալիս, բաւական վարանում էինք: Մաւրի զերում Օգեստիք անչափ բեմական կորիֆէնների են տեսած, որ տարակուտում էին թէ արդեօք Աղամեան պիտի կարողանակ անբիծ աղատւել աղդ զլխաւոր խաղից: Մի ժամանակ աղդ զերը Օգեստում կատարել է նշանաւոր Օլրիջը, և ես շատ լաւ պահպանած եմ լիշողութեանս մէջ մեր հասարակութեան այն ժամանակւակ ցնծութիւնը: Ցետու աղդ զերը կատարեց Էրնէստո Ռոսսի, և ապա Սալւինի, թատերական բեմի չափոնի թագաւորը, Բայց Աղամեան իւր խաղով ոչ միան չը զարթեցրեց աղդ մեծ հեղինակութիւնների վիշտակը, աղդ ցուց տեսց թէ ինքն էլ նրանց համահաւասար մի հանձար էաւ:

Օդեսակում արգելված էր թատրոններում դերասա-  
նին երեք անգամից աւելի բեմ կանչել, և փողոցներում  
ցուցեր անել. Նահանգապետի մասնաւոր թուլուութեամբ  
բացառապէս Աղամենանի համար ալդ արգելվը վերացաւ.  
Օթէլլօի ներկալացումից լետոյ Աղամենան տասնեւեց ան-  
գամ ի տես կանչւեց: Խսկ ամեն ներկալացումներից լետոյ  
ոգերուած ժողովուրդը խանդավառ ցուցերով առաջնոր-  
դում էր նրան դէպի իւր թնակարանը:

Արտաքոյ կարգի գրաւչութիւն ունէր Աղամենանի  
ստեղծած Ուրիէլ Ակոստան, որ իւր հոգեբանական խորին  
ուսումնասիրութեամբ բարձրացրած էր նրան իւր ար-  
ժանաւոր աստիճանի վերաց: Անկարելի էր աեսնել Աղա-  
մենանի Ուրիէլ Ակոստան և չը չափշտակւել: Նա ալդ դե-  
րումն էլ զերազանցեց իւր նախորդներին: Այս մասին  
աւելորդ չէ մէջ բերել „Խօվօրոսսէյսէի Տելեգրաֆէ“ թեր-  
թի քննադատութիւնից մի հատւած. «Առաջ, զրում է  
«Տէլեգրաֆ»-ի լոգւածագիրը, Բաւնալին տեսնել էի: Նա  
տպաւորել էր լիշտութեանս մէջ Ուրիէլի համակրելի պատ-  
կերը, որից լետոյ չէի ուզում նոյն դերում մի ուրիշ դե-  
րասանի տեսնել, որպէս զի այն քաղցր պատկերը չը ջնջէի  
մոքիցու: Բայց չը գիտեմ, նեղանամ թէ սքանչանամ Աղա-  
մենանի վերաց, որ հոգուս միջից հանելով այն պատկերը՝  
նորա տեղում քանդակեց մի ուրիշ Ուրիէլ: Տեսաւ ոչ թէ  
այն Ուրիէլը, ալդ հակ ճարտարագէտը բացեց իմ առաջն  
այդ կարող մարդու հզօր հոգւոն խորքը և լուսաւորեց  
նորա հոգոն ամենագալունի խորշերը»:

«Աղամենան մի հանձար է Ուրիէլ Ակոստակի դերում...  
Այս, Աղամենան ոչ միայն զերասան է, ալդ մի արտաքոյ  
կարգի տաղանդ, լաւագոյն ճարտարագէտ, և ժամանա-  
կակից թատրոնական հեղինակութիւնների մելնիչ»:

Անման էր մեծ արևեստագէտը Դիւմա որդու «Քին»-ի

դերում: Ակզրից մինչև վերջ հիանալի էին նորա բոլոր  
կերպարանափոխութիւնները: Մեծ ճաշակով կատարում էր  
նա Աննա Տէմրիի հետ լուրդ Մէնւիլի լանդիմանութեան  
և ներկալացման պատրաստութեան տեսարանները: Մա-  
նաւանդ վերջինում, ալդ ես Քինը չէր ներկալացւում բեմի  
վերաց, ալդ նոյն խակ Աղամենանը ինքն էր իւր կապրի-  
ներով, վալրկենական բարկութիւնով և բոպէական հաշ-  
տութեամբ: Մեծ նմանութիւն ունէ Դիւմակի նկարա-  
գրած Քինը Աղամենանի հետ: Կարծես հեղինակը դրանով  
կամեցել է ներկալացնել նոյն խակ Աղամենանին:

Գերազանց էր Աղամենան «Կորրադօ»-ի դերում: Բացի  
ալդ՝ նա սիրում էր խաղալ նոյն զերը: Զէր կարելի Աղա-  
մենանի ներկալացը Կորրադօից ուրիշ մի Կորրադօի  
աւելի կատարելազործեալ տիպար երեականը: Բացի  
սկզբից մինչև վերջ մշակւած հոգեբանական նուրբ խա-  
ղցից, Աղամենան մասնաւոր ինսամքով պատրաստած կա-  
տարում էր վերջին թունաւորման տեսարանը: Թէ որ  
աստիճան բնական էր խաղում նա ալդ տեսարանը,  
արդէն գորան ապացուց մէջ բերած ենք կ: Պոլսում ներ-  
կալացնելիս բեմի վերաց պատահած մի անցք, Նորա  
ցնցումների, կարկամութիւնների և ջղաձգութիւնների  
կատարեալ բնականութեանը վկանում էին բոլոր բժիշկ-  
ները, որոնք ստւար բազմութեամբ լաճախում էին Աղա-  
մենանի ալդչափ կատարելազործեալ ճշմարտանման կել-  
ծումին ականատես լինելու:

Աղամենանի կատարած բոլոր նշանաւոր դերերի  
մասին մանրամասն խօսելը մեղ շատ հեռու կը տանէր:  
Միայն մենք կը լիշտակենք որ նա մեծ լաջողութեամբ  
խաղում էր «Դիմականանդէս» ի Արքենինի դժւար և  
ապերախտ վերաց: Ուստի բոլոր նշանաւոր քննադատները  
վկանուցին թէ Աղամենան—Արքենին շատ զերազանց է Պիոս-

բէւփց, որ մինչև նորա երեալն համարւում էր միակ ընտիր Արքենինը, Գերազանց էր «Աւազակներ» ողբերդութեան Ֆրանց Մօօրի զերում, որի մասնաւորապէս և, արարւածը խաղում էր մեծ ճարտարութեամբ: Կատարեալ ինամբով արտասանում էր նաև Ֆրանսուա Կօպպէի «Դարբինների գործադրուլ» գեղեցիկ բանասանդութիւնը: Վերջերս ստեղծեց նաև «Զոհի տեղ զրո» պիէսում Բոչարովի գերը՝ կատարեալ լաջողութեամբ: Ինչպէս նաև «Եյւեր այր»ի գերը՝ որ նա խաղում էր ամենայն սիրով:

Բացի ողբերգականից, Աղամեան մեծ տաղանդ ունէր ընտիր և նուրբ կատակերգութեան, որ շատ առթիւ ցոց տւած էր, բաց չէր գործածում, երկրորդական առարկաց համարելով:

Նա առհասարակ իւր բոլոր խաղացած գերերին մի տեսակ անբացատրելի ոգի և շունչ էր փչում, որով կաշկանդում էր հանդիսականներին: Այդ ոգին մենք չենք տեսել ոչ մի աշխարհահռչակ տաղանդի վերաբ: Վկաց մեր ասածին ուռսական մամուլը, որ իւր բոլոր տեսած համբաւառներից բարձր գասեց Աղամեանին, չը նայելով որ նորա խաղացած լսվի, բացի անծանօթ լինելուց, շատերի համար գուռութիւնն անդամ տարակուսելի էր: Ահա ազալիսի անդաջող հանգամանքներում երեցաւ Աղամեան ուռսական բեմի վերաբ, և լազիթութեան դափնին արժանապէս ստացաւ՝ շնորհիւ իւր Աստուածատուր հանձարին:

\* \* \*

Ի՞նչ արեց Աղամեան հայ բեմի համար—Աղամեան բոլոր զին զուրկ էր վարչական ընդունակութիւններից: մինոն ժամանակ ոչ այնքան տրամադրիր ուսուցանելու (թէև, անկեղծ լինելու համար,

պէտք է ասենք որ նորան լսելու և նորա ասածներին հետեւ լու էլ տրամադրիներ չկալին). պէտք է նորից կրկնենք որ նա լաճախ գանգատում էր իւր ընկեր դերասանների արհեստի մասին ունեցած անտարբերութիւնից: Փաստերը ցոց տեսցին որ մինչ օրս ոչ մի գերասան դեռ չէ ըմբանել, կամ անկարող է եղել ըմբռնել արւեստի մասին նորա քարոզածը և կամ հասկացածը չէ իրագործել: Մենք սորանով չենք ստիպում, Աղամեանին հետեւած վնելու համար, անպատճառ Համլէտ կամ Օթէլլօ խաղալով ծաղրի առարկաց լինել: Աղամեանի քարոզածը ասելով մենք մատնացոց ենք անում այն ուղղութիւնը, որով նա պատրաստում էր իւր զերերը և բեմ գուրս զալիս՝ իւր ամեն մի բառին և ամեն մի շարժմանը ջանալով գեղարւեստի դրոշմը տալ: Հանգուցեալ արւեստագէտը ինքն է մեղ պատմած որ համարեա ոչինչ նշանակութիւն չէր ունենալ իւր տաղանդը եթէ երկարատես և անընդհատ մարդութիւններ չ'անէր թէ միմիկալի և թէ իւր մարմնի ճկնութեան զարգացման համար: Շատ զուր էին բարի հոգիների բերնով տարածւած լուրերը թէ՝ «Աղամեան ծովէ էր»: Աղամեան ոչ միան ծով չէր, այլ զժւար թէ մի զերասան նորա չափավ սիրէր իւր արւեստը և անխոնչ կերպով աշխատէր:

Նա ցոց տւաւ թէ տաղանդը մշակելով մինչև որ աստիճան կատարելութեան կարելի է հասցնել, ցոց տւաւ թէ ինչպէս պէտք է վերաբերել զէպի արւեստը և զարդացրեց ժողովրդի գեղագիտական ճաշակը:

Նա վեղափոխեց մինչև իւր ժամանակ գոլութիւն ունեցող արւեստի աւանդական կարգերը, ցոց տւաւ անընկան դրամաների և պատմական «Վարդան»-ների գեղարւեստի նկատմամբ ունեցած վնասոները, նորանով հայ կական թատրոնը հասաւ մի այնպիսի բարձրութեան, որ

ապագայ օրերը դժւար պիտի տեսնեն: Թէև պէտք է խոս-  
տովանելոր նա իւր րէպէրառուարը ներկաւացնելիս երբէք  
չէր մտածում իրան շրջապատող զերառանների կատա-  
րելովթեան և լարմարութեան, նա միմիավն նրանց ցուց  
էր տալիս զլխաւորաբար այն կէտերը, որ ուղղակի առ-  
ընչութիւն ունէին իւր խաղի հետ: Խակ խաղի ընդհանուր  
ամբողջութիւնը նա թողնում էր անուշաղիր, աճնպէս որ  
իրաւացի զգոնութիւններ լսում էին թէ «Աղամեան  
իրան թղուկներով է շրջապատում»: Նա չափազանց նա-  
խանձու էր:

\* \*

Աղամեան իւր բանաստեղծ և նկարիչ:—  
Աղամեանի գրած ոտանաւորներից 1880 թ. հրատարակ-  
ւեց մի հատոր, որ չ'արժանացաւ մի առանձին համակ-  
րութեան. ալդ ոտանաւորները որքան էլ մի զգալուն  
սրտի և վառ երեակացութեան արդիւնք էին, այնուամե-  
նանիւ գրական մեծ արժանաւորութիւն չունէին: Աւելի  
ընտիր, լուրջ և կատարելագործեալ են իւր վերջին տա-  
րիներում գրածները՝ որոնք դժբախդաբար անտիպ մնա-  
ցին. նոցա մէջ կաէ աւելի բանաստեղծութիւն, ճաշակ և  
միտք. խակ իւր նկարագրական—գեղարւեսաական գրւած-  
ներ՝ հիանալի են: Աղամեան ոչ նկարչի և ոչ էլ բանա-  
տեղծի կոչումով աշխարհ էր եկած. նորա ճակատին «բե-  
մական հանձար» գրւած էր, բայց միենոյն ժամանակ զար-  
մանալի են նորա ալդ ճիւղերում ցուց տւած ընդունակու-  
թիւնները, իւր բանաստեղծ նորա գրւածները կարելի է  
առանց տաղտկութեան մինչև անգամ սիրով կարդալ. նա  
մեծ խնամք էր տանում բառերի գեղեցիկ դասաւորու-  
թեան և լանգերի հարատութեան վերակ, որ մի բանաս-

տեղծական գրւածքի գեղարւեսական զլխաւոր արժա-  
նաւորութիւնն է, Բացի հրատարակւած աշխատութիւն.  
Ներից նորա վերջին գրւածքները աշխարհիկ հաւ գրակա-  
նութեան համար կարելի է մէկ մէկ զեղեցիկ մարգարիտ-  
ներ համարել, և ցանկալի էր որ հոգ տարւէր ժամ լա-  
ռաջ նոցա ի լուս ածելուն:

Աղամեան իւր նկարիչ, որքան մեծ ճաշակ և սէր  
ունէր դէպի գեղարւեստի ալդ ճիւղը, ալնուամենանիւ  
կարելի է համարձակ ասել որ նա ոչ թէ ստեղծագործող՝  
ալ օրինակող էր միակն: Բաց նա մեծ չնորհք ունէր  
ալդ մասում: Զը նակելով որ նա գեղարւեստի ալդ ճիւղը  
լոկ ինքնակրթութեամբ էր ձեռք բերել, բայց դէմքերը  
նկարում էր մեծ ճարտարութեամբ, նորագոն կատարելա-  
գործւած արհեստի պահանջների համաձայն: Նա ապ-  
րուստի համար լաճախ ձեռք էր առնում իւր վրձինը:  
Մէծ հասկացողութիւն ունէր գողների բաղադրութեան  
(coloris) մասին: Խակ անթերի և կատարեալ էին իւր  
nature-morte նկարները, որոնց անչափ սիրում էր.

Ուկողսիս եղած ժամանակ Աղամեան նկարից հը-  
շաւոր ծովանկարիչ Յ. Ազվազովսկու պատկերը, որին ըն-  
դունելով մեծ վարպետը՝ գովեց Աղամեանի նկարչական  
ընդունակութիւնը: Առասարակ իւր ինքնուս նկարիչ,  
Աղամեան գերազանց էր:

\* \*

Ի՞նչ էր սիրում Աղամեան:—Տաղանդաւոր  
արւեստագէտը վերջերա հոգւով մարմնով անձնատուր  
էր եղած հոգեխօսութեան (spiritism), որի մասին  
ամեն գրւածք հաւաքում էր ինհամքով և ուսումնասիրում:  
Աւ մարդիկն էին իւր մերձաւորները՝ որոնք հետա-

քրքրւում էին ալդ գիտութեամբ՝ որին վերաբերւում էր մեծ հաւատքով և երկիւզածութեամբ։ Իւր վառ երեակացութիւնը և հետախուզող բնաւորութիւնը առաջ ճարակ էր գտել նրանում, բայց ոչ մի կերպով չէր լազենում։ Բնութիւնը իւր գաղտնիքները շատ թանձր վարագործով էր ծածկել։ Բայց Աղամեանի աչքերը չէին սիրում արգելքի պատահել։ Իւր չը տեսածի պակասը նա երեակացութեամբ էր լրացնում։

Քանի գիշերներ Աղամեան իւր համախօներով լուսացրել է կանաչ սեղանի շուրջ մեծ ոգիների բերդից գոնէ մի դաշտնիք խելու համար։ Հետզհետէ կանչում էր իւր հօր, մօր, Ներսէս Մեծի, Ներսէս պատրիարքի, Շեքսպիրի ոգիները, հարցնում էր, խօսում էր նոցա հետ, իւր և ուրիշների ապագայի մասին։ Գոհացնում էին նորան ոգիները, նրանց հաճելի էր որ հողեղէն մարդը խռովէր իրանց անդրգերեզմանական հանդիսար։ Զենք կարսդ սորան մի որոշ պատասխան տալ։ Միայն փշում եմ այն օրը, երբ չոփենաւ նստած մեկնելու էինք դէպի Զմիւռնիա, Աղամեան իւր մի քանի լուզարկաւոր բարեկամների հետ առանձնացած հողեխօսութեան մասին էր ճառում։ Նա ձեռքում բռնած թղթերու մի մեծ ծրար, ցոյց էր տալիս ան ապագայի գուշակութիւնները որ թելադրել էին ողիները։ «Բացի Շեքսպիրից, ով կարող է ալսպիսի մտքեր լաւոնել» զուռում էր Աղամեան լի հաւատքով։ Ապա պատմում էր թէ որքան արագ թելադրում էր ողին, ախալէս որ ամենաարագ ձեռքը հաղլւ համնում էր աչդ սոլորը ուրւագրելու։

Զարմանալի չէր, երբ Աղամեան, կէս գիշերին վեր թռած իւր անկողնից, եթէ իւր սենեակում ննջած էր մի բարեկամ, նրան, և եթէ ոչ, մօտի սենեակի ննջողներին զարթեցնէր և ողիների մասին մի բան հարցնէր

կամ պատմէր։ Տեսնելով նորա ալդ աստիճան ոգիների հետ զբաղմունքը, հարցնում էի ինքս ինձ «Աղամեան ալսաստիճան ենթարկելով իւր վառ երեակացութեան ազդեցութեան, արգելոք չը պիտի վնասէ իւր մտաւորական կարողութեան»։

Բացի նկարչութիւնից և գրականական զբաղմունքներից, Աղամեան չափազաց սիրում էր ձկնորսութիւնը և իւր որսած ձկների և առհաստարակ Պետրոս առաքեալի արհեստում ունեցած լաջողութիւնը և ճարպիկութիւնը պարծենալով էր պատմում։ Նա որ իբրև դերասան երբէք ինքնազով և պարծենկուտ չէր, առանձին սնափառութիւն էր զգում դէպի ձկնորսութիւնը և սիրում էր երբ զովում էին այս մասում իւր լաջողակութիւնը։

Պէօլիկ-Դէրէի առաջ կարելի էր նորան տեսնել միշտ վաղ առաւտեան կարթը ձեռքին, մի ընկեր էլ իւր զիմաց նաւակում նստաւ, ձուկ որսալիս։ Նա երեխավի նման հրձւում էր երբ ծովի բնակիչներից մէկը բոնւում էր իւր կարթից։

\* \*

Մեր մասնաւոր կարծիքը նորա մասին ընդհանրապէս—Ներկալացնելով ընթերցող հայ հասարակութեան թատրոնական մեծ վերանորոգչի բնաւորութեան, կեանքի և արւեստի մասին մեր զիտեցածը, կատարելապէս զգում ենք սորա համառօտութիւնը և թերութիւնները։ Քանի որ նորա մօտիկ ծանօթներից և բարեկամներից ոչ ոք չէր լանձն առնում մեծ արեւտագէտի նշանակութեան մասին մի քանի իսօսք ասելու, մենք պարտք համարեցինք գոնէ այս համառօտութիւնը հաղորդել, ընդհարձակագոնը աւելի կարողներին թողնելով։

Մենք որքան զարմանքով և հիացմամբ նակել ենք նորա արտակարգ տաղանդի վերակ, որքան զմալելով հետևել ենք նորա կատարած դերերին և մեր զմավմանը միշտ հետևել է սրանչացումը, բայց չաճախ ևս առիթ ենք ունեցել անչափ տիրելու նորա բնաւորութեան թերութիւնների վերակ, որ շատ անգամ պատճառ էին դառնում նորա բարոյական և նիւթական վնասին: Թէս ամեն թերութիւն ծածկւում էր իւր տաղանդի քղանցքին տակ, բայց մի ծայրը միշտ դուրս էր մնում: Իբրև մարդու մենք նորան ներկայացրինք մեր կարողացած սահմանի մէջ, կատարելապէս երաշխաւորելով մեր ասածների ճշմարտութեանը.

Այն շրջանում, այն հասարակութեան մէջ և հանգամանքներում, որտեղ մեծացել և զարգացել էր նա, որտեղ հասունացել էր Աղամեանի տաղանդը, եթէ աչքի առաջ ունենանք բոլոր այս պարագաները, (որոնց մասին բաւականի խօսած ենք բ. մասում), այն ժամանակ կրկին առիթ է ներկայանում մեր աչքին աւելի զարմանալու նորա բազմակողմանի ընդունակութիւնների վերակ: Երեակացեցէք մի մարդ որ մինչև անգամ զուրկ է եղել միջնակարգ կրթութիւնից՝ ինքնօգնութեամբ և աշխատութեամբ կարողացել է այն աստիճանի լառաջ գնալ, որ բացատրել է Նեքսպիրի խորախորնուրդ ստեղծադրութիւնները մարդաքաղաքների զարգացած հասարակութիւնների առաջ՝ մինչև այն ժամանակ անձանօթնրութեամբ, ճարտարութեամբ և լազողակութեամբ. ամբողջ մի զարգացած հասարակութեան մամուլից միաձան հոչակել է բհմական բարձր տաղանդներից բարձրագոյն և անզուգական. նա գրել է համարեա առանց սովորելու՝ իւր բնական ճաշակով, նա մտածել է առանց զարգացուցիչ դպրոցների՝ իւր բնական հանձարով, նա կարել է առանց ուսուցչի՝ իւր բնական ճարտարու-

թեամբ. Նա խօսել է լեզուներ առանց վարժապետի՝ իւր բնական տաղանդով, թէս մեր մէջ չատ չը զարմանալը նորութիւնների կարգին է, բայց մենք չենք կարող զսպել մեր զարմանքը բնութեան այս տարօրինակ դաւակի վերաբ:

Մենք չենք կարող երեակաէել կամ բացատրել թէ ինչ պիտի լինէր Աղամեան, եթէ ունենար մի որոշ աստիճանի կրթութիւն:

Նա շատ ծրագիրներ իւր հետ գերեզման իշեցրուց, որոնց գլխաւորն էր Եւրոպակում իւր կատարելիք ճանապարհորդութիւնը՝ որ հայ հանձարի և հայ լեզւի չաղթանակը պիտի լինէր: Նա մեզ դեռ շատ պէտք էր:

Նա մտադիր էր հայ թատրոնի վերակազմութեան նկատմամբ աշխատութիւններ պատրաստել, որ անչուշտ չէր թողարում իւր բազմազբան վիճակը, որ ի հարկէ թողած էր աւելի իւր ալեսոր օրերին:

Վերջացնելով մեր խօսքը նորա մասին, կ'ասենք որ Աղամեան, թատրոնի աց ամենափակուն աստղը, մեր աշքին շատերի երեացածից աւելի մեծ է թւել և համարելով նորան ժամանակիս ամենամեծ տաղանդաւոր դերասանը, (սա մեր մամնաւոր կարծիքն է) աշխատել ենք մեր սովն գրւածքում ցուց տալ մեծ արւեստագէտի բազմակողմանի բոլոր արժանաւորութիւնը: Մենք որքան կատարելապէս ըմբռնել և հասկացել ենք նորան, աշխատել ենք մեր ըմբռնածը նորութեամբ հաղորդել հասարակութեան,

Մեր չաճախակի տեսակցութեան մէջ իւր չարունակ կրկնած խօսքերից մէկն էր՝ «եղբակը Վրովը, մեծ, շատ մեծ արւեստ է գերասանութիւնը». և ես առանց իւր ասածին բացատրութիւնը պահանջելու, մտածում էի ինքս ինձ, աշխատում էի չափել ալդ անչատակ և կնճռու-

արւեստի բոլոր խորութիւնը՝ որ բարձր էր ուժերիցս,  
միմիայն տքնում էի գոնէ մօտաւորապէս մի սահման  
որոշել ալդ «մեծ, շատ մեծ արւեստ»-ին։ Ի՞նչ էր պա-  
հանջւռում կատարեալ դերասան լինելու համար,—բացի  
աստածատուր տաղանդից և ընդունակութիւններից՝  
առողջ և չափաւոր կազմածք. ուժեղ, մաքուր և ճկուն  
ձան, շարժուն, միմիկապի ընդունակ զէմք, վառ երևա-  
կալութիւն, զարգացած և թափանցող միտք, ընդհանուր  
և գրականութեան պատմութեան ուսումնասիրութիւն,  
գեղագիտական և նկարչական վերին աստիճանի զարգա-  
ցած ճաշակ, և ալն և ալն։ Այս բոլորը ներկայանում  
էին աչքիս, և մեծ արւեստագէտի խօսքերը շարունակ  
հնչում ականջիս. «գերասանութիւնը մեծ, շատ մեծ  
արւեստ է» և անքան դժւար՝ որքան դժւար է գանել մի  
մարդ՝ օժտած բարովական և փիզիքական անչափ արժա.  
նաւորութիւններով։ Եւ բնութիւնը շուալած էր Աղամեա.  
նին վերոնշեալ բոլոր չնորհքները։

Նկարագրել ճշտօրէն Աղամեանին իբր մարդու և  
թէ իբր գերասանի, գա մի անպիսի նիւթ է, որի մասին  
շատ երկար կարող է գրել և գարճեալ թերի համարւել։  
Մէջ մեր կարողացածը արմցինք և պիտի աշխատենք  
մեծ արւեստագէտի կենսագրութեան լրացուցիչ մասերը  
հետզհետէ հրատարակութեան տալ։ Մեր ցանկութիւնն է  
որ ալդ մեծ մարդու մեծ հոգին երևալ բոլորին իւր  
առաւելութիւններով ու թերութիւններով։

Թանգ է մեզ համար Աղամեանի ամեն մի տող ձե.  
ռագիրը և կարեոր նոցա հրատարակութիւնը, գլխաւորա.  
բար նրանք՝ որոնք որ և է գրական արժէք ունին, և  
կամ պարզում են նորա ներքին կեանքի և հոգու մութ  
անկիւնները։ Իւր գրական աշխատութիւնները ամբողջա.  
պէս կ. Պոլիս իւր աղգականների մօտ են, հետեարար

նոցա հրատարակութեան պէտք է որ նոքա հոգատար  
լինեն։ Խոկ Աղամեանին իբր մարդու և արւեստագէտի  
շատ մօտից կարելի է ճանաչել իւր առ պ. Աղեքսանդր  
Ստեփանեանց ուղղած հնգամեալ թղթակցութիւններից,  
որ պահւած են։ Պ. Ստեփանեանց որ բարեսիրաբար թող  
տեսք մեղ ակս գրւածքի համար օդուել ալդ նամակներից,  
լուսամքը չը պիտի մերժէ և մեր սկսած գործը ամբող-  
ջացնելու համար, պիտի հաճի թուլատրելու, որ ալդ նա-  
մակները հրատարակենք, քանի որ նոցա մեջ երեսում են  
Աղամեանի վիշտը, ուրախութիւնը, լուզմունքը, գանգատ-  
ները և բարկութիւնը։ Աղամեան ոչ մի տեղ չէ երեսում  
անպէս՝ ինչպէս իւր նամակներում, մանաւանդ, եթէ  
ի նկատի ունենանք որ մեծ արւեստագէտի ամբողջ ներ-  
քին աշխարհը բաց էր իւր միակ սրտակից բարեկամի  
առաջ։

2005

2013

2005

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0855889

ԳԻՒՆ Է 20 ԿՈՊ.

Վաճառւում է Թիֆլիսի հայ դրավաճառանոցներում:

Օտարաքաղաքացիք 22 կ. փոստի մարկա ներփակելով  
կարող են դիմել՝ Թիֆլիս, Ա. Խոպիրեանցին, Թի-  
քայելեան կամուրջի վերաբ: